

ՄԵՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Կարդացուած 1913 թ. հոկտ. 14-ին Ս. Էջմիածնում
Համագրային Մեծ յօբելեանի հանդէսի ժամանակ)

Յորելնական Յանձնաժողովը յարմար համարեց հայ գրի այս մեծ յօբելեանին խորհրդակցութիւն ունենալ մեր ուղղագրութեան մասին և ինձ առաջարկեց ներկայացնել մի զեկուցում, թէ արդեօք պէտք է և կաշելի է փոփոխութիւններ մտցնել մեր աւանդական ուղղագրութեան մէջ, և ինչպիսի և ինչ փոփոխութիւններ կարևոր և հնարաւոր է այժմ անել:

Ողջունելով մեր այս խորհրդակցութեան գործը՝ ես պիտի աշխատեմ պարզել իմ հայեացքն այս դժուար ու կնճռոտ խնդրի մասին, որ հայերէն բառերի գրի առնուելուց 1500 տարի յետոյ պէտք է որ իսկապէս առանձին ուշադրութեան արժանանայ:

Ամենից առաջ, առանց երկար բացատրութիւնների մէջ մտնելու, պիտի շեշտեմ մի սկզբունք, որ ընդհանուր ընդունուած է բոլոր ազգերից. դա այն է, որ ամեն գրական լեզուի համար միակերպ քերականութեան հետ անհրաժեշտ պայման է նաև միակերպ ուղղագրութիւնը, որով պահուած է գրական լեզուի միութիւնը, և զանազան բարբառների մարդիկ, որոնք խօսելիս յաճախ տարբեր արտասանութեան են հետևում, իրար գրած հեշտութեամբ հասկանում են: Դրա մէջ է հինց. գրական լեզուի և գրաւոր խօսքի մեծ նշանակութիւնը:

Կենդանի լեզուի զիմաց գրութիւնն անշուշտ մի պայմանական բան է, որ մենք կարող ենք փոփոխել. դա խօսուած լեզուի պայմանական պատկերն է միայն, որ էժագրում ենք և ուրիշները զբանով ըմբռնում են մեր մտքերը: Հասկանալի է, որ կենդանի խօսքի պատկերներն ընդհանուր ընդունուած պիտի լինին, ուրիշ խօսքով ուղղագր. թիւնը միութիւն պիտի ունենայ, որպէս զի նոյն լեզու՝ խօսող մարդիկ կարողանան մէկմէկու գրած հեշտութեամբ վերծանել: Բացի այդ՝ բառերի պատկերները դարէ դար էլ չպիտի մեծ փոփոխութիւնների ենթակայ լինին, որպէս զի յաջորդ սերունդները չկտրուեն նախորդների հետ՝ գրի միջոցով մտաւոր հարողակցութիւն ունենալուց: Եթէ չլինի ուրեմն ուղղագրութեան այս ընդհանուր և տեական միութիւնը, չի կարող գոյութիւն ունենալ և մի ընդհանուր գրական լեզու: Հայերէնի համար աւելի մեծ է այս պայմանի նշանակութիւնը, քանի որ մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ: Ուստի հենց սկզբից պիտի ասեմ, որ եթէ որ և է

փոփոխութիւն պէտք է մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն
գրութիւն մտցնի և մեր գրական լեզուներն իրարուց աւելի հե-
ռացնի, աւելի լաւ է, որ չիֆի Այս պատճառով այս խնդրին պէտք
է շատ մեծ զգուշութեամբ մտնել:

Ուղղագրութեան միակերպութեան հետ միասամանակ կայ
և մի ուրիշ պահանջ. խօսքի պատկերների թիւը չպիտի շարժանց
մեծ լինի, որ շատ մարդիկ և հետաւեցեալ կարողանան սովորել
և գործ դնել: Գրա համար առաջ է եկել հնչական գրութիւնը.
կենդանի խօսքը վերլուծուել է իր ամենապարզ բաղադրիչ մասե-
րէն՝ հնչիւններին և սրանց համար միայն յօրինուել են առանձին
պայմանական նշաններ՝ տառերը, որով և հնարաւոր է դարձել մի
30—40 նշանով տալ և ըմբռնել ամբողջ խօսուածքի պատկերը.
Ինչքան բազմապատ կերպով հնչիւնները միանում են և ամբողջա-
կան բառեր են կազմում, նոյնքան բազմազան կերպով և հնչու-
նների տարբեր տարբեր նշաններն իրար մօտ զծագրուելով՝ բառերի
համար առանձին առանձին խմբակցութիւններ կամ պատկերներ են
առաջ բերում. բայց միայն նոր գրել-կարդալ սովորելիս՝ մենք այդ
խմբակցութիւնների մէջ ամեն մի առանձին տառի վրայ յատուկ ուշա-
դրութիւն ենք դարձնում, իսկ վարժուելուց յետոյ՝ կարդալիս մեր
այլը սովորաբար բաւականանում է բառերի ընդհանուր պատկերը
միայն տեսնելով վերձանել, իսկ ձեռքը մեքենայաբար զծագրում է
այդ պատկերներն, իրար ետևից շարելով հարկաւոր տառերը՝ առանց
տակչոյն որ մենք մեր ստորում բառերը միշտ իրենց բաղադրիչ հնչ-
իւններին վերածէինք: Գրել կարդալու վարժուած մարդն ու, երբ
ամեն մի բառի առանձին առանձին պատկերներն է կարդում և
գրում. նա սկսում է հնչիւնական գրութիւնից և վերջացնում մի
տեսակ պատկերագրով, հնչիւնական խիստ գրութիւնն ուրեմն,
որով լեզուի ամեն հնչիւն մի առանձին նշանագիր պիտի ունենայ
և ամեն տառ միայն մի հնչիւնի նշանագիր պիտի լինի, անհրա-
ժեշտ է ոչ այնքան նրանց համար, որ սրղէն վարժ են մի լեզուով
գրել կարդալուն, որքան նրանց համար. որ նոր են սկսում այդ
արուեստը սովորել: Այս պատճառով և այն ազգերը, որնք իրենց
գրի ու գրականութեան սկզբում իրենց լեզուի համար յատուկ
այբբենարան են յօրինել և ոչ թէ ուրիշներից լոկ փոխառութիւն
արել, այնպատեղ են իրենց այբբենարանը յարմարեցնել իրենց լեզուի
պահանջներին, ստեղծել ըստ կարելւոյն խիստ հնչիւնական գրու-
թիւն, որպէսզի գրել կարդալ սովորելու գործը դիւրութեամբ զուր-
գայ: Մեր այբբենարանն իւր սկզբնական շրջանում ունեցել է,
ինչպէս ընդունում են, այս կատարելութիւնը:

Սակայն կենդանի խօսուածքը կայուն չէ իր հնչիւնական
գրութեամբ. ամեն լեզուի մէջ հնչիւնները, աւելի մեծ կամ փոքր

դարաշրջաններում, անխուսափելի կերպով միշտ փոփոխութիւննսքի ենթակայ են: Յաճախ մի հնչիւն վերածւում է երկու հնչիւնի, կամ ընդհակառակն երկու հնչիւն միասին վերածւում են մի պարզ հնչիւնի կամ մի հնչիւն բառերի մէջ որոշ օրէնքով փոխւում, շուտ է գալիս մի ուրիշ հնչիւնի, և այսպէս շարժւակ:

Դրա հետեանքը լինում է այն, որ բառերի պատկերները որոնք գրի ու գլխանութեան սկզբնական շրջանում խիստ հնչիւնական գրութեամբ են գծագրուել, հետգհետէ կորցնում են իրենց այս բնաւորութիւնը և երբեմն այնպիսի ձևով, որ յաճախ ամեն առանձին բառերի համար յատկապէս պիտի սովորել նրանց գծագրութիւնը: Լեզուի բնական հնչափոխութիւնն ուրեմն ոչնչացնում է գրութեան հնչական գրութիւնը: Եւ որովհետև մի բնական պահանջ է՝ գրել կարգալու գործն ըստ կարելւոյն զիւրացնել և մարդկութիւնը դրա համար ուրիշ հիմնական միջոց չի դառնէ բացի հնչական գրութիւնից, ուստի պահանջ է զղաջւում բառերի նին պատկերները փոխել նոր հնչական գրութեանը: Դրանից է առաջ դալիս և ամեն ուղղագրական խնդիր:

Ըստ երևոյթին դա հնչաւ բան է թւում, և դժուար էլ չէր լինիլ, եթէ չլինէր այն հիմնական սկզբունքը, որ ամենից առաջ դրինք. այն է՝ միակերպ ուղղագրութեան պահանջը, ուղղագրութեան մի միութիւնը, որ ամենքը պիտի գործադրեն, որպէս զի մարդիկ կարողանան իրար հասկանալ գրի միջ յով: Արդ ի՞նչպէր թաշում է, զիրը մնում է. մեր նախնիքների արտասանութիւնը անհետացել է, բայց նրանց արտասանած բառերի պատկերները մնացել են: և կենդանի ապրող գրագէտները գործադրում են այդ Յարմար թէ անյարմար, բայց դա մի պատրաստի ընդհանուր գործիք է, որ կարելի չէ մի կողմ դնել և տեղը ձեռք բերել մի նորը, որ վաղ թէ ուշ այդ նի վիճակին պիտի դառնայ: Լեզուի հնչիւնները մշտական և բազմազան ուղղութիւններով փոփոխութեան մէջ են, և մենք այդ չենք գլուս. բայց բառերի թանձրացած պատկերները, որ շատ զգալի են, չեն կարող մշտական և բազմազան փոփոխութիւնների մէջ լինել, առանց մեզ դժուարութիւններ և անյարմարութիւններ պատճառելու: Ուստի, ուզենք չուզենք, ստիպուած ենք կապուած մնալու բառերի նի գծագրութիւններին և հնարաւոր նորոգութիւնները միայն անելու դրանց մէջ: Բայց ինչպէս ամենայն հնազած բան, ինչքան էլ նորոգենք, կարկատենք, նորի տեղը չի բռնիլ. — ճիշտ այնպէս և այստեղ: Մինչ մի կողմից մենք նորոգում ենք մի մասը՝ վերածելով հնչական գրութեան, մի կողմից մի ուրիշ բան ծակւում է, քանի որ հնչափոխութիւնը կենդանի ներգործում է շարունակ. և երբ մենք դառնում ենք այս ծակուած տեղը կարկատելու, անս այն կողմում մեր մի անգամ

արդէն նորոգած մասն է հնանում և անպէտքանում և հարկ է լինում կրկին նորոգութեան, և այսպէս անվերջ, իսկ մի անկամից ամբողջապէս հիմնովին նորոգելու համար ոչ մի հնարաւորութիւն չկայ, ոչ թէ նրա համար որ լնդուագիտութիւնն աւոր է այդ անելու, այլ բրովհետեւ այդ անհրաժեշտօրէն կը մտցնէ խառն գրութիւն, և մարդիկ մէկմէկու գրած հեշտութեամբ չեն հասկանալ, քանի որ բառերի պատճենները մեծ փոփոխութեան կենթարկուեն, այն էլ ոչ միակերպ և ամենքից ընդհանուր ընդունելի ձևով: Էլ չեմ ասում այն, որ միշտ էլ և ամեն տեղ էլ կան մարդկանց ամբողջ դասեր, որոնք ծանօթ հոգեբանութեամբ աւելի սիրով կապուած են մնում հին, աւանդականին: Դրանք են և այն ծայրայեղները, որոնք մերժում են ամեն փոփոխութիւն ուղղագրութեան մէջ: Բայց դրանք իրականութեան առաջ փակում են միայն իրենց աչքերը, իրենք էլ ենթարկում են անգիտակցաբար կատարուած փոփոխութիւններին և միժուտ են միայն գիտակցական փոփոխութիւնները: Բայց լոկ մերժելով չի մերժուել իրողութիւնը:

Նոր իրողութիւնն այս է. որ ազգի ուղղագրութիւն էլ տաննք, կը տաննք, որ երբեք քարացած չի մնացել, այլ միշտ փոփոխուել է: Փոփոխութիւնը երբեմն լինում է հետզհետէ անզգայաբար, բայց և երբեմն առանձին որոշումով: Ուրիշ խօսքով, լինում են չբժաններ, երբ կատարուում են փոփոխութիւններ, բայց լսելիայն, առանց մեծ պահանջի. բայց և լինում են չբժաններ, երբ ուղղագրութեան փոփոխութեան մեծ կարիք է զգացուում, ուստի այս խնդիրը կենդանի հետաքրքրութիւն է առաջ բերում և լուծումն պահանջում: Իսկ լուծումը՝ լինում է երկու հիմունքով. նախ՝ գլխաւորապէս ճնշաբանութիւնն է՝ նկատի առնուում, այն է՝ աշխատում են ուղղագրութիւնը մօտեցնել բնական խօսքի մէջ տիրող արտասանութեանը, և ապա մասամբ նաև բառերի ծագումը. ստուգաբանութիւնն է նկատի առնուում՝ առանձին բառերի գրութիւնը որոշ միակերպ կանոնի սիտեմի վերածելու համար:

Մեր ուղղագրութիւնն ևս միշտ փոփոխութեան մէջ է եղել: Առանց հին դարերի փոփոխութիւններին գիմելու, որ գտնում ենք ձեռագիրների մէջ և որոնցից մի քանիսը մենք ներքեում կը տեսնենք, 19-րդ դարու առաջին յիսնամեակում հենց, մեր նոր լեզուի ուղղագրութեան մէջ, համեմատաբար աւելի մեծ բազմազանութիւն ենք գտնում. ըսկ նոյն դարի երկրորդ կէսից սկսած տեսնում ենք ձգտում մեր նոր լեզուի մէջ ուղղագրական միակերպութիւն առաջ բերելու: Եւ այս առաջ է գալիս գլխաւորապէս բարարի ուղղագրութեան ազդեցութեամբ. բայց ոչ հին գրաբարի, այլ այն՝ որ Մխիթարեաններն ընդունում են իրենց հրատարակութիւնների մէջ: Առանձին բառերի ուղղագրութեան համար մեծ նշանակութիւն է

ունենում հայերէն բառարանների հրատարակութիւնը: Այս ձգտման հետևանքն այն է լինում, որ 1880-ական թուականներին մեր ուղղագրութիւնն ընդհանուր առմամբ կարելի է բաւական միակերպ համարել: Բայց յաջորդ տասնամակից սխալում է մի նոր հոսանք՝ ուղղագրութիւնն ըստ կարելւոյն մօտեցնել արտասանութեանը, կամ աւելի ճիշտ՝ դիւրացնել հայոց լեզուի ուղղագրութիւնը: Այսպիսի փորձեր առաջ էլ եղել են, բայց անյաջողութեամբ են անցել: Բայց այս անգամ այս ձգտումը, որ սկսուած է ւ-ի և ու-ի գրութեան յայտնի վէճերով, զնալով աւելի ընդարձակ ծաւալ է ստանում արեւելեան աշխարհաբարբի մէջ:

Փոփոխութիւնն սկսուած է բուն մանկավարժական նպատակներով, որ է դիւրացնել երևիսաներին գրել-կարդալ սկսելու գործը՝ վ-ահնչիւն ու-ի փոխանակ ւ-ի կիրառութեամբ. և որովհետև սկսողն Ղ. Աղա, կանն էր, որի դասագրքերը 1890-ական թուականներին և յետոյ շատ տարածուած էին, և որովհետև նոյն ուղղագրութիւնը գործածուած են ուրիշ դասագրքեր ևս, ինչպէս և անմիջապէս մի քանի պարբերական հրատարակութիւններ, ուստի նոր սերունդը վարժուեցաւ ւ-ագրութեանը, որով և մի քսան տարուայ ընթացքում արագ մեծ ծաւալ ստացաւ այդ ուղղագրութիւնը: Այժմ արեւելեան աշխարհաբարբի մէջ հին ու-ագրութիւնը պահում են մեծ մասամբ հին սերնդի մարդիկ, քանի որ 1890-ական թուականներին մեր դպրոցներից ելնողներն ևս մեծ մասամբ թողել են դպրոցում սովորած ու-ագրութիւնը՝ յարելով ւ-ագրութեանը: զլխաւորապէս այն պատճառով, որ նրանք մեծ մասամբ մանկավարժական ասպարէզում ևս գործելով՝ տեսնում են ւ-ագրութեան մատուցած դիւրութիւնը, երբեմն նոյն իսկ ստիպուած են հետևող հանգրսանում ւ-ագրութեան, որովհետև դասագրքերը մեծ մասամբ այդ ձևի գրութեամբ են:

Այժմ, ինչքան էլ ւ-ագրութեան հակառակողներ լինին, բայց իրողութիւնն այն է, որ այդ գրութիւնն եթէ իշխող չէ, աւելի ու աւելի է տարածուած և ա. ևս առաջուայ չափով խորթ չի թւում նոյն իսկ մեզ, որ չենք հետևում այդ ուղղագրութեանը. որովհետև թէպէտ մեր ձեռքը գրում է դեռ նուեք, զուարթ, բայց աչքն աւելի շատ նուեք, զուարթ է տեսնում: Այս հանգամանքը կարելի չէ չտեսնելու տալ: Բայց և միւս կողմից երևում է ձգտում նաև ուրիշ գրութիւններ դիւրացնելու. այսպէս՝ բառերի վերջի անձայն յ-ն դուրս են ձգում. օ-ով գրուող բառերը օ-ով են գրում և նմանները: Եւ վերջապէս եղանակաւ առաջարկողներ և գործադրողներ՝ վ հնչիւնը միայն վ տառով գրել՝ զվարթ, ևղավիթ: Մենք ապրում ենք ուրեմն մի այնպիսի շրջանում, երբ ուղղագրութեան անզգային փոփոխութիւնները մեզ չեն գոհացնում և պահանջ ենք զգում աւելի մեծ փոփոխութիւնների:

Ինչից է առաջանում այս ձգտումը:

Այս ձգտումն, ասում են փոփոխութեան թէ կողմնակիցները և թէ հակառակորդները, առաջ է գալիս նոյն հանգամանքից, որից առաջացել է և ռ-ադրութիւնը, այն է երեսանների համար դիւրացնել մեր ուղղագրութիւնը: Ուրեմն մանկավարժական տեսակէտը: Դրա համար էլ այդպիսի փոփոխութիւններ անողներին դէմ միշտ բնութում են: Իրիշ ազգերի օրինակը, որոնց ուղղագրութիւնը շատ աւելի դժուար է, քան մերը. բայց նրանք պահում են իրենց դժուար ուղղագրութիւնը և մանկավարժական նպատակների համար փոփոխութիւններ չեն մտցնում: Եւ այս առարկութեան կամ, լաւ եւ ասած, օրինակի դէմ փոփոխութեան կողմնակիցներից ես ուրիշ պատասխան չեմ լսել, այլ միայն՝ «Բայց նա ինձ չէ օրինակւոյ, Լոկ մանկավարժական տեսակէտով ուրեմն, իմ կարծիքով, դեռ չի բացատրուում, թէ ինչու ուղղագրութեան ինդիքը շարունակ արժարժուում է: Ուրիշներն ասում են, թէ այդ նրանից է, որ Հայոց լեզուն մեռնում է Ռուսաստանում. այսպէս են բացատրում ուղղագրութեան փոփոխութեան հակառակորդները այդ երեւոյթը: Դրա արժէքը մենք ներքեւում կը տեսնենք: Այստեղ այս միայն նկատեմ, որ մի ժամանակ էլ, երբ պահանջ էր զգացուել գրաբարի փոխանակ դնել նոր, կենդանի լեզուն, նոյն ձևով առարկում էին, թէ մեր լեզուն մեռնում է, թէ գրաբար չիմացողներն են ուզում ռամկի լեզուով գրել. փոխանակ մեր պապերի սրբաւան լեզուն փոխանակելու ռամկի լեզուով՝ աւելի լաւ է գրաբար սովորեն: Բայց ժամանակի պահանջը, իրերի բնական ընթացքն իրենն արաւ. և այժմ այլ եւ մէկը չկայ, որ աշխարհաբար գրելու դէմ լինի: Իմ կարծիքով ուղղագրութեան փոփոխութեան դէմ եղողները, երբ մեր լեզուի «մեռնելը» մէջ են բերում, ճիշտ այնպէս են դատում, ինչպէս աշխարհաբարի հակառակորդները: Իսկ այդպէս դատել և ամեն ուղղագրական խնդիր աւելորդ և վնասակար համարել, կը նշանակէ իրնրի էութեան մէջ չթափանցել և ձեռք լուանալ ու մի կողմ քաշուել:

Ես այս ուղղագրութեան խնդիրն իսկապէս շարունակութիւն և մնացորդ եմ համարում գրաբարի և աշխարհաբարի մեծ վէճի, որ դեռ վերջնական բաւարար լուծում չի տապել մտքերի մէջ ընդհանրապէս: Այս տեսակէտից նայելով խնդրին՝ կը տեսնենք, որ դա նոյնպիսի պահանջ է, ինչ որ սի ժամանակ աշխարհաբար գրական լեզուի խնդիրը, և նոյնպէս պիտի, այս կամ այն կերպ, լուծում տա՞նայ, ինչպէս աշխարհաբարի խնդիրը:

Ի՞նչ է եղել գրաբարի և աշխարհաբարի խնդիրը: Գրել այնպէս, ինչպէս որ խօսում ենք: Բայց ինչպէս է լուծուած այդ խնդիրը, կամ որ միեւնոյն է՝ ինչպէս է կազմուած մեր աշխարհաբար լեզուն: Մեր շարահիւսութիւնը և ձևարանութիւնը էապէս դար-

ձած է կենդանի գործածականը, ի հարկէ գրաբարի որոշ ազդեցութեամբ, որ անհրաժեշտ է եղել լեզուի ձկունութեան համար Մեր քառարանն այսօր խառնուրդ է ժողովրդականի և գրաբարի, իշխողն ի հարկէ ժողովրդականն է, որովհետև գրաբարի բառերի ամենամեծ մասն այսօր կենդանի են ժողովրդի մէջ. բայց և այնպէս գրաբարի շատ մեծած բառեր էլ աճուած են աշխարհաբարի մէջ և անպայման հետզհետէ բոլոր այդպիսի անհրաժեշտ բառերն էլ պիտի կենդանանան աշխարհաբարի մէջ: Այս երկը կողմի՛ շարահիւսութեան, ձևաբանութեան և բառարանի նկատմամբ անսփերջնական կարակազութեան է եկել մեր նոր լեզուն. նա բռնել է իր զարգացման վերջնական ուղին, որով այսուհետև էլ պիտի ընթանայ. ոչ որ այսուհետև առանց խորթ երևալու չի կարող գրել՝ ցնացանք տունն տեսանելոյ համար: Բայց և ամենևին խորթ չի թուում, երբ ամեն օր գրում և ասում ենք՝ մաքրութեան համար, սրբութեամբ կատարել և այլն: Պատճառն այն է, որ 1880-ական թուականներէն ի վեր, երբ վերջացաւ գրաբարի և աշխարհաբարի վէճը. մեր մտքերն աշխարհաբարի բառարանի, ձևաբանութեան և շարահիւսութեան նկատմամբ ընդհանրապէս որոշ եղրակացութեան են եկել. մենք ամենքս ընդունում ենք որոշ դրութիւններ այդ մասում և այլ ևս վիճելի չենք համարում: Բայց այն կողմը կայ դեռ բառերի գրութեան կամ ուղղագրութեան խնդիրը, որ պակաս նշանակութիւն չունի մինչ որ գրական լեզուի համար, քան ձևաբանութիւնն ու շարահիւսութիւնը: Այդ խնդիրը դեռ լուծում չի ստացել. կամ թէ թերի լուծումն է ստացել, կամ թուում է թէ թե՛ չի լուծում է ստացել:

Գրաբարն աշխարհաբարի վրայ շատ աւելի է ազդել ուղղագրութեան մէջ, քան շարահիւսութեան և ձևաբանութեան մէջ. մենք այժմ գրում ենք գրեթէ ամբողջապէս գրաբարի ձևով: Այս կողմից մեր լեզուն քիչ է նորոգուել:

Ուղղագրութեան վէճի ժամանակ՝ փոփոխութեան հակառակորդները յաճախ օրինակ են բերում ուրիշ ազգերի ուղղագրութեան դժուարութիւններն՝ ասելով, թէ Ֆրանսիացիք և ուրիշները, որ մեզից շատ աւելի խելօք են, ինչո՞ւ չեն իրենց դժուար ուղղագրութիւնը փոխում: Եւ այս առարկութիւնը հիմնաւոր է, եթէ միայն մանկավարժական տեսակէտը նկատի առնուի. բայց կորցնում է իր արժէքը, երբ խնդրին նայում ենք գրաբարի և աշխարհաբարի, ինչ և նոր լեզուների մրցման տեսակէտից: Որովհետև այդպէս առարկողները, երկու լեզուների տարբեր շրջաններ են իրար հետ բաղդատութեան մէջ դնում: Այդ ազգերի ուղղագրութիւնն այն շրջաններում, կրթութիւնն և ինչ լեզուն և նոր գրական լեզու են անաջ բերել, ոչ միայն փոփոխութեան է ենթարկուած, այլ և այնպիսի մեծ փոփոխութեան, որի մասին մենք երևակայել

չենք կարող հին Ֆրանսերէնի ուղղագրութիւնը նոր Ֆրանսերէնից, նոյնպէս հին, միջին և բարձր գերմաներէնի ուղղագրութիւններն իրարուց շատ տարբեր են: Նրանք ուղղագրական շատ վէճեր, փոփոխութեան զանազան փորձեր ունեցել են, մինչև մի որոշ գրութեան են հասել, որ ամենքի համար ընդունելի է գարձել և այնուհետև աստիճանաբար թեթև փոփոխութիւններ են միայն, մտորել և մտցնում ուղղագրութեան մէջ: Շատ քնական է ուրեմն որ այն բազմաթիւ վէճերն ու փորձերը, որ, օրինակ, Ֆրանսիացիք ապրել են 15—17-րդ դարերում, մենք դեռ նոր 19-րդ դարու երկրորդ կէսից յետոյ պիտի ունենայինք, գրաբարեան և աշխարհաբարեան վէճերը դեռ մի 25 տարի առաջ կային, մեր դպրոցներում դեռ մի քանի տարի առաջ աշխարհաբարի ուսում չկար, քակ ա. էջմիածնի Չեմարանի դպրանոցական բաժնի վերին գասարաններում դեռ երկրորդ տարին է, որ աշխարհաբար լեզուի և գրականութեան դասեր են մտցրած: Շատ քնական է ուրեմն, որ ինչպէս շատ բանում դեռ մենք նոր ենք բաժանուում հնից, ինչ որ ուրիշ ազգերը վաղուց ապրել են, մենք դեռ նոր ենք ապրում, — նոյնպէս և ինչ վէճեր որ նրանք ունեցել են դարեր առաջ հին ու նոր լեզուի հի: ու նոր ուղղագրութեան համար, մենք դեռ նոր ենք քննութեան առարկայ դարձնում: Մենք ուղղագրութեան խնդիր անուան տակ շարունակում ենք ուրեմն գրաբարի և աշխարհաբարի դեռ բոլորովին չվերջացած խնդիրը: Այդ է պատճառը, որ ուղղագրութեան հարցը կենդանի կերպով սկսեց արժարձուել հննց այն ժամանակից, երբ աշխարհաբարը 1880-ական թուականներին իւր յօլթանակը տարաւ ձևարանութեան և շարահիւսութեան մէջ, և այս նկատմամբ որոշ գծուած ճանապարհ բռնեց: Խնդիրը ձևաբանութեան և շարահիւսութեան մասին սպառուած էր, բայց ոչ գրութեան ձևի մասին. քանի որ ընդունուած է գրաբարի ուղղագրութիւնը, թուում է թէ աշխարհաբարի յաղթանակը դեռ թերի է:

Այստեղ ահա ահաք է որոնել այս ուղղագրութեան խնդրի շարունակ արժարձման պատճառը, և ոչ թէ սննառների ցանկութեան մէջ, կամ Հայոց լեզուի Ռուսաստանում թուլանալու մէջ, կամ լոկ մանկավարժական նպատակների մէջ: Ես կարծում եմ, քանի մտքերն այս կողմից ես մի ընդհանուր եզրակացութեան չեն եկել և չեն բաւարարուել, դեռ կը շարունակուի այս վէճը: Վերջնական եզրակացութիւնն անպատճառ այն չպիտի լինի, որ մեր ուղղագրութիւնը մեծ փոփոխութեան պիտի ենթարկուի. կարող է և այն լինել, որ պահուի մեր հին ուղղագրութիւնը, թեթև փոփոխութիւններով, գուցէ և առանց փոփոխութիւնների: Սուքս ուրեմն այն մասին չէ, թէ ինչպիսի ուղղագրութիւն կունենանք ապագայում, այլ այն մասին է, որ մենք ընդհանրապէս այն համոզման

եկած կր լինենք. թէ մեր ուղղագրութիւնն այսպէս է, այսպէս էլ պիտի լինի, և այլապէս անհնարին է անել, և թէ մենք ոչտաք է հետեւենք այդ ուղղագրութեանը, իսկ մինչև այդ եզրակացութեան գալը՝ մենք երկար վիճենք պիտի ու խորհրդակցենք:

Եւ այս խորհրդակցութեան գործնական հետեանքն էլ ևս նրա մէջ չեմ տեսնում, որ մենք այս կամ այն փոփոխութիւնը պիտի ընդունենք կամ մերժենք, այլ զուցէ կարող ենք որոշ ուղղագրական խնդիրներին նկատմամբ մի ընդհանուր եզրակացութեան գալ, թէ այս այսպէս պիտի լինի, և այլապէս չի կարող լինել առանց գրական լեզուին վնասելու:

Ինչո՞ւ աշխարհաբարի առհանրողները 19-րդ դարում առանձին ուշադրութեան չեն առել ուղղագրութեան խնդիրը և փոխելով հին լեզուն՝ չեն փոխել նրա ուղղագրութիւնը: Իրա մի գրութաւոր պատճառն այն է, որ այդ ժամանակ դրաբարի մէջ ևս պահուած չի եղել հին արտասանութիւնը, այլ ընդունուած է եղել, ինչպէս այժմ է, աշխարհաբարի արտասանութիւնը: Ուրիշ խօսքով գրաբարը գրել են և գրում ենք մեծ մասամբ 5-րդ դարու ձևով, բայց արտասանել են և արտասանում ենք այժմեան աշխարհաբարի ձևով: 19-րդ դարու գրաբարում այլ ևս չէր իշխում այն խիստ հնչիւնական գրութիւնը, որ եղել է մեր գրականութեան սկզբում. գրութիւնն այլ ևս համապատասխան չէր արտասանութեանը. գրում էին որդի (ordi) արտասանում էին վորթի, գրում էին գուարթ, արտասանում զվարթ, գրում էին ողորմեա, արտասանում՝ նայելով անղերին՝ ուղորմյա, վողորմյա, ուղղորմյա ևլն: 19-րդ դարու աշխարհաբարեանները, որոնք գրում և կարգում էին շարունակ գրաբար, լեզուն աշխարհաբարի շուք տալիս, բնականաբար ոչ մի խորթութիւն չպիտի տեսնէին քառերի պատկերը նոյնը պահելով: Եթէ նրանք գրաբարում գրում էին գօրանայ, բայց կարգում էին գօրանա, և գրաբարի համար այդ խորթ չէր երեւում, աշխարհաբարի համար ևս խորթ չպիտի թուէր գօրանայ գրել և գօրանա կարգալ: Կայ սակայն և մի ուրիշ պատճառ, որ էական է: Նրանք գիտակցաբար, թէ անլիտակցաբար, բայց անհրաժեշտօրէն ստիպուած են եղել պահել գրաբարի ուղղագրութիւնը՝ հենց աշխարհաբար առաջ բերելու համար: Յայտնի է, որ մեր աշխարհաբարը ոչ թ' մի մեծ գրական գործով է սկիզբն առել, որի լեզուն օրինակելի լինէր ամենքի համար.—ինչպէս յաճախ ուրիշների մէջ գրական լեզուն, կամ հենց մեր գրաբարը 5-րդ դարում Աստուածաշնչի թարգմանութեամբ,—այլ մեր աշխարհաբարը հետզհետեւ և մեծ մաքառումներով է կազմուել, այն էլ զանազան կողմերից, մինչև որ առաջ են եկել մեր երկու նոր գրական լեզուները: Իսկ այսպիսի պայմաններին մէջ գրաբարի ուղղագրութեան պահպանումն անհրաժեշտ էր ոչ

Թէ միայն նրա համար, որ հենց իրենց աշխարհաբար գրողներին համար գորահաւ, վորքի գրութիւնները խորթ կը լինէին, այլ և աւելի ևս նրա համար, որ աշխարհաբարի հակառակորդներն ամենեին չէին կարող հաշտուել այդպիսի նորածն գրութիւններին, որով կերպարանափոխուում էր բառերի պատկերը: Բայց այդ՝ դպրոցներում պաշտօնագէտ ընդունուած էր միայն գրաբարը և մեր աշակերտները մինչև վերջին տարիներս դեռ միայն գրաբար էին գրում իրենց շար՝ գրութիւնները. նրանք պէտք է ուրեմն միայն բառերի գրաբարի գրութեանը վարժուէին և չէին կարող նոյն արտասանութեան համար դպրոցում սովորել գրել ռոյլի և արտասանել վորթի, իսկ դպրոցից դուրս գրել վորթի:

Ա.պա որ գլխաւորն է՝ աշխարհաբարը մանր ձեռով և զանազան կողմերից առաջ գալով՝ չէր կարող հիմնուել որևէ տեղի արտասանութեան վրայ, և մի նոր, գրաբարից տարբեր, բայց միակերպ ուղղագրութիւն առաջ բերել, որ օրինակելի և ընդունելի լինէր ամենքի համար: Այսպիսի հանգամանքում, թողնել գրաբարի ուղղագրութիւնը՝ կը նշանակէր մի խառնափնթոր գրութիւն ստեղծել: Գրաբարի ուղղագրութիւնն է միայն դարձել փրկութիւն այդ գրութիւնից դուրս գալու համար, և է այժմ նոյնը: Շատ անգամ յայտնուած ճշմարտութիւն է, որ աշխարհաբարը չէր կարող այնպէս արագ զարգանալ, եթէ չլինէր գրաբարը: Բայց ճշմարտութիւն պէտք է ընդունել և այն, որ եթէ չլինէր գրաբարի ուղղագրութիւնը մենք դժուար թէ ունենայինք մեր արգի գրական լեզուն, և մեր երկու աշխարհաբարներն այնքան հեռու կը լինէին իրարուց, որ կը կարգայինք, բայց դժուար կը հասկանայինք առանց առաջուց առանձնապէս սովորած լինելու: Թէ ինչքան տարբեր կը լինէին բառերի պատկերները թէ կուզ մեր երկու աշխարհաբարի մէջ, եթէ դիցուք արևմտեան աշխարհաբարն արեւմտեան դպրոցական արտասանութեամբ գրէին, արևելեանը՝ արևելեան. — գրա մի փոքրիկ արտասայտութիւնն է մեր տարբեր տառագարծութիւնները, որ գծրախտաբար կայ օտարազգի բառերի և անունների համար՝ Պետերբուրգ, Բեդերպուրկ, ֆէթէրպուրկ, Պարիզ, Բարիզ, Փարիզ եւն: Պէտք է երևակայել այն խառնափնթոր գրութիւնը և անվերժանելի վիճակը, եթէ հայերէն բառերը օտարազգի բառերի այս տարբեր ձևերով գրէին թէ կուզ, ասում եմ, արևելեան և արևմտեան գրական լեզուների մէջ: Հապա եթէ մէջ գային նաև զանազան բարբառների արտասանութեան ազդեցութիւնները... այն ժամանակ պէտք կը լինէր ձեռք քաշել գրական լեզու ունենալուց: Կը նշանակէ գրաբարի աւանդական գրութիւնը, որ ընդունել են ամենուրեք, մի անհրաժեշտ միջոց է եղել աշխարհաբար առաջ բերելու համար, քանի որ ոչ մի տեղի արտասանութիւն չէր կարող տեղի

տալ միւսի առաջ, իսկ ընդհանուր միատեսակ գրութիւնն անհրաժեշտ պայման է գրական լեզուի համար:

Սրանով պիտի բացատրել մի քանի փորձերի անյաջողութիւնը, որոնցով կամեցել են 1850—1870-ական թուականներին գրել արտասանութեան համեմատ: Այդ ժամանակ այդպիսի փորձերը լոկ մնասել կը նշանակէին աշխարհաբարի գործին, դանդաղեցնելով նրա յաղթութիւնը գրաբարի վրայ: Այդպիսի փորձեր անողները վստահ պիտի լինէին իրենց մեծ հեղինակութեան վրայ, թէ իրենց ձեռնարկածն ընդունելի և օրինակելի կը դառնար ընդհանրութիւնից: Բայց ի հարկէ իրողութիւնն այն էր, որ գրաբարի դարերով սրբագործուած գրութիւնը,—որ, ինչպէս ասացի, կարգում էին աշխարհաբարի ձևով, թէկուզ ամեն մարդ իր տեղական արտասանութիւնով,—չատ աւելի մեծ հեղինակութիւն էր և չէր կարող զիջել այս կամ այն անհատական փորձերին, այս կամ այն տեղի արտասանութեանը: Եւ եթէ մի գրական լեզու պիտի լինէր միակերպ ուղղագրութեամբ, դա պիտի լինէր անհրաժեշտօրէն գրաբարի ուղղագրութեամբ, և ոչ մի ուրիշ: Եւ գրաբարի ազդեցութեան այս անհրաժեշտութիւնը միայն էր եղել է ամեն տեղ, որի հետեանքն եղել է այն, որ մենք թէպէտ երկու գրական լեզու ունինք, բայց բարեբախտաբար գոնէ մի և նոյն գրաբարի ուղղաչրութեամբ: Թէ չէ, մեծ դժբախտութիւն կը լինէր ազգային տեսակետից, եթէ մեր երկու գրական լեզուները մէջ ուղղագրութիւնը հիմնուած լինէր ոչ թէ գրաբարի վրայ, այլ տարբեր տեղերի արտասանութեան:

Վերսում գրածից, կարծեմ, պիտի երևայ, որ մեր ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելն այնքան հեշտ չէ, ինչպէս միամտօրէն կարծողներ կան: Իժուար է ոչ միայն հնչաբանական պատճառով, այլ և նրա համար, որ մենք ունինք երկու գրական լեզու, իրենց ուրոյն դպրոցական արտասանութեամբ, և որ մեր երկու գրական լեզուներն ևս էապէս արդէն կազմակերպուած են ինչպէս քերականութեան, այնպէս և ուղղագրութեան և արտասանութեան նկատմամբ: Ինչքան էլ մեր աշխարհաբարները նոր են, և մենք դեռ նոր ենք ապրում նրա ուղղագրութեան վէճերը, բայց մեր այդ լեզուներն արդէն անցել են իրենց սկզբնական շրջանը, երբ պէտք է եղած լինէր ամեն հիմնական փոփոխութիւն ուղղագրութեան մէջ՝ ձևաբանութեան և շարահիւտութեան փոփոխութիւնների հետ միասին: Եւ եթէ մեր գրական լեզուներն իրենց սկզբնական շրջանում չեն կրել խոշոր փոփոխութիւններ ուղղագրութեան մէջ և, ինչպէս տեսանք, չէին էլ կարող անհրաժեշտօրէն կրել մեծ փոփոխութիւններ, այսուհետև ևս ամեն հիմնական փոփոխութիւն այդ մասում չեն կարող ընդունել առանց ցնցումների, քանի որ իշխում է նոյն հիմունքը, որով ընդունուած է գրաբարի ուղղագրութիւնը: Ուս-

ափ միանգամ ընդմիջտ պիտի հրաժարուել ուղղագրութեան մէջ հիմնական փոփոխութիւններ մտցնելու ամեն ծայրայեղ մտքից, որով ցանկանում են մեր ուղղագրութիւնը խիստ հնչաբանական դարձնել, որովհետեւ այդպիսի մտքի գործադրութիւնը հաւասարա-
 փոր է մեր մեծ ջանքերով ձեռք բերուած գրական լեզուներից հրա-
 ժարուելուն, առնուազն գոնէ երկու այնպիսի գրական լեզու ունե-
 նալուն, որոնք իրարուց անչափ հնուու կը լինին:

Փոփոխութեան կուսակիցների այս ծայրայեղութեան կողքին՝
 ծայրայեղութեան մէջ են ընկնում, սակայն, նաև փոփոխութեան
 հակառակորդները, մերժելով ամեն տեսակի փոփոխութիւն: Այստեղ
 անա պիտի նկատի ունենանք ուրիշ ազգերի օրինակը: Ուստի
 տեսնենք, թէ ինչպէս են մտածում և վարում ուրիշները. ես կառ-
 նեմ միայն ֆրանսիացիներին, որոնց անունը յաճախ յիշում են մեր
 ուղղագրական վէճերի մէջ:

Մի յայտնի քերականութեան¹⁾ «Ուղղագրութիւն» ընդարձակ
 գլխի մէջ կարդում ենք. «Ֆրանսերէնի ուղղագրութիւնը սոսկալի
 համբաւ ունի. այն իմանալը մեծ պարծանք չէ, բայց մեծ ամօթ է
 չիմանալը. ամենափոքր սխալը վարկարեկում է հեղինակին և ուղ-
 ղագրութիւն չիմանալը սգիտութիւն է և ծաղրելի... Ֆրանսերէնի
 տառերի արժէքը հազուադէպ համաձայն է այն հնչիւնին, որ նրանք
 ներկայացնում են... Որպէս զի ֆրանսերէնի ուղղագրութիւնը կա-
 տարեալ լինէր, պէտք է ամեն հնչիւն մի հատ տառով ներկայ-
 ցուէր, և որ այս տառը միայն միևնոյն հնչիւնի համար պահուած
 լինէր, ինչպէս է *voilà* բառի մէջ, որ չորս հնչիւն ունի չորս տառով
 արտայայտուած: Բայց շատ յաճախ գործ են ածուած շատ տառեր
 միևնոյն հնչիւնն արտայայտելու համար: Այսպէս *eau*, որ միայն մի
 հնչիւն (o) է պատկերացնում, կազմուած է երեք տառից. շատ յա-
 ճախ այսպէս միևնոյն հնչիւնը տարրեր տառերով է արտայայտուած:
 Այսպէս *an* հնչիւնը քսան տեսակ արտայայտուած է գտնուում
 [բերուած են օրինակներ], իսկ *in* հնչիւնը քսաներկու տեսակ
 [բերուած են օրինակներ].— Ինչպէս տեսնում էք, իրաւ որ ֆրանսե-
 րէնի ուղղագրութիւնը մերից շատ աւելի շժուար է: Նոյն քերա-
 կանութեան մէջ մի առ մի թուած են ուղղագրութեան այդ գրու-
 թեան պատճառները. և թէ ինչպէս դարեր շարունակ այնպատի են
 ուղղագրութիւնը թեթեւացնել և շատ բան հետզհետէ հեշտադրել
 են: Ըստեցնելով արտասանութեանը. և ապա թէ ինչպէս հնչիւնա-
 բանական ուղղագրութիւնը գործադրելն անհնարին է. Առաջին
 երևոյթից՝ ոչինչ աւելի հրապուրիչ չէ, քան այս միակ կանոնը՝

1) Brachet et Dussuchet, Gramm. française, cours supérieur, II. édit. p. 24.

գրել ինչպէս խօսում են. բայց ոչինչ աւելի ցնորական չէ լուրջ քննութեան ասնելիս: Արդարև եթէ ուղղագրութիւնը պէտք է միայն հնչարանական լինի. եթէ պէտք է գրել՝ ինչպէս խօսում են, ինչպէս Պիկարդացին և Գասկոնացին, Պրովանսացին և Նորմանդացին կարող են մի ընդհանուր ուղղագրութիւն ունենալ: Ի՞նչպէս կը զանազանեն այն ժամանակ saint (սուրբ), sain (առողջ), sein (ծոց), seing (ստորագիր), cinq (հինգ), ceint, որ միևնոյ՛ հնչիւնն ունին և որոնք միևնոյն տառերը պիտի ունենան: Բաղմաթիւ բառեր, որ այլ ևս չեն տարբերում արտասանութեամբ, կը չիօթուին գրութեամբ: Մեր լեզուն կը կորցնի իր սկզբնական գրոշը և իր ազնութեան պատւանդը. միևնոյն կերպարանքով, բայց երկբայական իմաստով բառերի այս կուտակութեան մէջ ֆրանսերէնը կը դառնայ անընթեռնի նոյն իսկ նոյն լեզուն, խօսողների համար... Ահա մի զօրաւոր արգելք հնչիւնական ուղղագրութեան համար, որ ինչպէս կը տեսնենք, գոյութիւն չունի հայերէնում: Եւ վերջապէս մի ուրիշ հիմունք էլ է բերուած. «Բոլոր ֆրանսիացիները չեն կարող մի օրում փոխել այն ուղղագրութիւնը, որ նրանք տաժանելի աշխատանքով սովորել և գործածել են իրենց մանկութիւնից ի վեր»:

Ահա այն զլիւաւոր հիմունքները, որ բերում են ֆրանսերէնի ուղղագրութեան փոփոխութեան դէմ, և որոնցով «չաղուց ի վեր դատապարտուած» է համարում հնչարանական ուղղագրութիւնը:

Բայց շնայելով դրան՝ ֆրանսերէնի ուղղագրութեան մէջ ևս հետզհետէ փոփոխութիւններ են մտնում: Նոյն քերականութեան մէջ «ուղղագրութեան մէջ մտցնելի փոփոխութիւններ» վերնագրի տակ բերուած են մի շարք անյարիբ գրութիւններ և խօսելով ուղղագրութեան դժուար, անօգուտ կանոնների մասին՝ աւելացրած է. «Շատ անգամ բաւական կը լինէր գրչի մի շարժում կանոնն ընդհանրացնելու և բացառութիւնների երեսները յապաւելու համար... բայց Ակադեմիան միայն բաւական իշխանութիւն և հեղինակութիւն ունի այս վերանորոգութիւնը կատարելու»... «Գուտանք միայն, որ Ակադեմիան համարձակ կրճտնի այն ճանապարհը, որով նա մինչև այժմ լուի փորձել է ընթանալ»:

Վերսում դրած հիմունքները յաճախ կրկնում են և մեզնում նրանք, որ հակառակ են մեր ուղղագրութեան մէջ որևէ փոփոխութիւն մտցնելու: Ուստի տեսնենք, թէ ինչ արժէք ունին հայերէնի համար այդ կէտերը:

Հնչարանական ուղղագրութիւնը մերժում է ամենից առաջ նրա համար, որ չկայ ընդհանուր արտասանութիւն և զանազան գաւառացիներ տարբեր տարբեր ձևերով են արտասանում. եթէ ամեն մէկը գրէր այնպէս, ինչպէս խօսում են, այն ժամանակ կ'ոչնչանար հիմնական սկզբունքը, այն է՝ ընդհանուր միակերպ ուղ-

զագրութիւնն այլ ևս գոյութիւն չէր ունենալ: Ուստի ընդունելով որ կարելի է ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելով մօտեցնել արտասանութեանը, իբրև մի սահմանափակող երկրորդ սկզբունք սիտի ընդունել այն, որ կա: Ելի չէ ոչ մի փոփոխութիւն մտցնել հիմնուած լոկ մի որ եւե տեղական արտասանութեան վրայ, այլ միայն քնդհանուր գրական արտասանութեան վրայ, եթէ կայ այդպիսին: Արդարև, եթէ միայն տեղական արտասանութիւնները նկատի ունենաք, այն ժամանակ էլ ինչպէս կարող են Կ. Պօլսեցիին ու Թիֆլիսեցիին, Վեննցիին ու Ղարաբաղցիին մի ընդհանուր ուղղագրութիւն ունենալ. մէկը կը գրէր բարի, միւսը՝ փարի, մի ուրիշը պարի և այլն: Եւ հետևանքն այն կը լինէր, որ մենք կունենայինք նոյն իսկ արևելեան կողմում ոչ թէ մի, այլ մի քանի գրական շեղումներ: Հենց այս պատճառով, մի փոքր առաջ տեսանք, մեր աշխարհարարների մէջ անհրաժեշտօրէն ընդունուած է գրարարի ուղղագրութիւնը: Բայց սա միայն մի կողմն է:

Ով որ մեր բարբառներով գրազուել է՝ գիճէ, որ ամենամեծ տարբերութիւնը կայ բաղաձայնների արտասանութեան մէջ: Նոյն մեծ տարբերութիւնը գտնուած ենք նաև մեր արևելեան և արևմտեան գրական լեզուների մէջ: Արդարև որոշ դէպքերում այս երկու բարբառները նոյն հնչափոխութիւն են կրել. ինչպէս արևելեան բարբառի մէջ ևս ը բաղաձայնից յետոյ բ. գ. դ. ձ. ջ արտասանուած են իբրև փ. ք. թ. ց. չ՝ երբ, կարգ, վարդ, բայց այս երեւոյթն արևմտեան լեզուի մէջ ընդհանրացել է: Հին հայերէնի երեք տեսակ պայթական հնչիւններն արևելեան գրական լեզուի մէջ ընդհանրապէս մնում են. բայց արևմտեան գրականը թրթռուն պայթուցիկները վերածած է թափ, իսկ խուլերը վերածած է թրթռունի (Աճառ. Հայ Բարբառագիտ. եր. 17), այսինքն մեր բ. գ. դ. ձ. ջ դարձել են փ. ք. թ. ց. չ, իսկ մեր պ. կ. տ. ծ, ճ արտասանուած են իբրև բ. գ. դ. ձ. ջ, Սակայն թէ արևելեան և թէ արևմտեան բարբառներից մի քանիսը մի շորորդ տեսակի հագագաւոր պայթականն են ևս ունին: Ուստի հենց որ ոչ թէ տեղական, այլ նոյն իսկ եթէ գրական արտասանութեան վրայ հիմնենք բաղաձայնների գրութիւնը, մեր երկու գրական լեզուների մէջ ուղղագրութեան միութիւնը կը վերանայ: Եւ եթէ ուղղագրութեան միութիւնն առաջին պայմանն է, կրնանաւէ՛լ՝ ոչ մի փոփոխութիւն կարելի չէ մտցնել մեր բաղաձայնների գրութեան մէջ, ոչ արևելեան և ոչ արևմտեան աշխարհարարի մէջ: Ամեն այդպիսի փոփոխութիւն՝ գրութիւնն ընդհանրապէս չի մօտեցնիլ արտասանութեանը, քանի որ ամեն նոր տեսակի գրութիւն որ հիմնուած է մի բարբառի արտասանութեան վրայ, միև բարբառների արտասա-

Նութիւնից հետու կը լինի. իսկ եթէ շատ բարբառների արտասանութեան վրայ հիմնուի գրութիւնը, այն ժամանակ առաջ կը գայ գրութեան մէջ մի խառնաշփոթ գրութիւն: Մեր ուղղագրութեան միատեսակութեան ամենակարևոր պայմանն ուրիշն այն է, որ ձեռք չպիտի տրուի բաղաձայնների աւանդական ուղղագրութեանը. ուրիշ խօսքով՝ ինչ որ բաղաձայնների ուղղագրութեանն է վերաբերում, պէտք է պահենք գրարարի ուղղագրութիւնը, քանի որ ոչ մի ուրիշ նոր ուղղագրութիւն, մօտ լինելով մի որոշ բարբառի արտասանութեանը՝ հաւասար չափով ընդհանրապէս աւելի մօտ չպիտի լինի բոլոր բարբառների արտասանութեանը, քան հին գրութիւնը. որով և ոչ մի ուրիշ նոր գրութիւն չպիտի աւելի դիւրացնի բաղաձայնների ուղղագրութիւնն ընդհանրապէս ամեն բարբառի համար: Այսպիսի գրութեան մէջ բնականաբար մենք մի անգամ ընդ միշտ պիտի հրաժարուենք բաղաձայնների գրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու առաջարկից և պիտի հաշուենք եղած գրութեան հետ և գերադասենք հին աւանդական ուղղագրութիւնը, որ իւր բոլոր դժուարութիւններով հանդերձ՝ յամենայն դէպս լաւագոյնն է, թէկուզ միայն նրանով որ ընդհանուր ընդունուած է և գործածական է, որով և մենք այժմ հեշտ հասկանում ենք ոչ միայն մեր երկու գրական լեզուները, այլ և հինը՝ գրաբարը: Եւ եթէ մենք զիսկնք մեր ուղղագրութեան փոփոխութիւնները դարերը ընթացքում, կրտսենենք, որ բաղաձայնների ուղղագրութիւնը գրեթէ անփոփոխ է մնացել սկզբից մինչև այժմ: Սակաւթիւ բառեր միայն կան, որոնց մէջ զ-պ, գ-կ, դ-տ և այլն նոյն կարգի հնչիւնների տատանու է առաջ եկել՝ թանգ-թանկ, գունդ-գունտ և այլն:

Այսպէս ուրեմն բաղաձայնների հին ուղղագրութիւնն անձեռնմխելի պիտի մնայ, և այս ոչ թէ այն պատճառով որ այդպէս ենք կամենում, այլ նրա համար, որ ամեն այդպիսի փոփոխութիւն աննպատակ կը լինի և աւելի մեծ դժուարութիւններ առաջ կը բերի, քան եղած գրութիւնը: Դա կըստեղծի իրաւ որ մի «նոր բարելոնեան խառնակութիւն»: Եւ եթէ մենք ուզում ենք գրական լեզու ունենալ և այն, որ արևմտեան աշխարհաբար իմացողի համար հասկանալի լինի արևելեան աշխարհաբարը, կամ ընդհակառակն, մենք պէտք է պահենք այդ պայմանը, ի՛նչպէս որ պահել ենք ցարդ:

Այս սկզբունքը ամենից կատարն է մեր ուղղագրութեան համար. և եթէ մեր այս խորհրդակցութեան մէջ ամենքս գանք թէկուզ միայն այն համոզումին, որ մեր բաղաձայնների ուղղագրութեան չի կարելի և չպիտի դիպչել, դրանով արդէն շատ բան պարզուած կըլինի մեր այս ուղղագրական վէճերի նկատմամբ: Ամեն

նից առաջ դարձնալ այն, որ հիմնական մեծ փոփոխութիւն մտցնել անհնարին է մեր աւանդական ուղղադրութեան մէջ, այլ հնարաւոր են միայն մասնակի փոփոխութիւններ, որոնց թիւը մեծ չի կարող լինել, քանի որ այդպիսի փոփոխութիւնները պիտի լինեն միայն ձայնաւոր տառերի ուղղագրութեան մէջ, այն էլ այն տառերի, որոնց գրութիւնը համապատասխան չէ եթէ ոչ բոլոր բարբառների, առնուազն գոնէ երկու գրական լեզուների ընդհանուր դպրոցական արտասանութեանը: Այս կը վերացուի փոփոխութեան դէմ եղողների մի մեծ առարկութիւնը, որ միշտ մէջ են բերում. այն է թէ մի փոփոխութիւնը ետևից քարշ կը տա, ուրիշ փոփոխութիւններ, և այդպիսի փոփոխութիւնների վերջ չի լինիլ, և ահա կը բացուի մի դուռն, որ փակել չի լինիլ, և մեծ դժուարութեամբ և ահագին ջանքերով ձեռք բերուած մեր գրական լեզուն կորստի կը մատնուի, որովհետև մեր ուղղադրութիւնը տակն ու վրայ կը լինի: Այս վտանգը կը լինէր սակայն միայն այն ժամանակ, կըր մի որոշ քնական սահման չլինէր փոփոխութիւնների համար, Բայց քանի որ կայ այդ սահմանը, բաղաձայնների անձնական խելութիւնը, որից դէնն անցնել կարելի չէ առանց այդ վտանգի, և որից դէնն անցնելը ոչ մի նպատակ չունի, ուստի կարծում եմ, այդպիսի մեծ վախեր ունենալ պէտք չէ և կարելի չէ մի քանի հնարաւոր մասնակի փոփոխութիւնների հետեանքի մասին:

Եւ ես կարծու մ եմ, որ մենք կարող ենք և պէտք է անենք այդ հնարաւոր փոփոխութիւնները, որոնց համար միակ արգելքն է, իմ կարծիքով, ապրող գրագէտների դժուարութիւնը: Տեսնենք ուրեմն խնդրի այս կողմը:

Եթէ մի Ֆրանսիացի ուղղադրութեան փոփոխութեան դէմ իբրև մի կարևոր հիմունք բերում է այն, որ բոլոր Ֆրանսիացիք չեն կարող մի օրում փոխել այն ուղղագրութիւնը, որ մանկութիւնից սովորել են մեծ ջանքերով և գործածել, — այդ հասկանալի է մի ազգի համար, որի մէջ գրագէտների տոկոսը շատ մեծ է: Մի լիոնաւոր ապրող գրագէտներն՝ այդ հիմունքով, այսպէս ասած, չեն ուզում իրենց մի նոր դժուարութիւն ևս պատճառել մի նոր տեսակի ուղղադրութիւն ևս սովորելու. կենդանի ապրող սերունդն ուրեմն չի կամենում մի անգամ ուղղադրութեան համար բազմանից ջանքեր գործ դրած լինելուց յետոյ՝ մի նոր աշխատանք ևս յանձն առնել և այս նրա համար, որ ապագայ մի քանի սերունդների զիւրութիւն լինի: Այս հիմունքը սակայն մեզ համար անհամեմատ աւելի պակաս նշանակութիւն ունի, քան Ֆրանսիացիների համար. մեր գրագէտների, մանաւանդ ուղիղ գրողների տոկոսը դժբախտաբար դեռ այնքան փոքր է, որ մեր գրագիտութիւնը դեռ միայն ապագայում պիտի կազմուի, և մեր սակաւաթիւ գրագէտ-

ները յանուն այդ ապագայի մեծ գրագիտութեան, կարծեմ, կարող են և պիտի աշխատեն կրկին դժուարութիւնը յանձն առնել, որովհետեւ կարելի չէ հերքել այն, որ ինչքան հեշտ լինի մեր ուղղագրութիւնը, այնքան աւելի կը ծաւալուի մեզմեզմէ գրագիտութիւնը, կը մեծանայ ուղիղ գրողների թիւը:

Որ ուղղագրութեան խնդիրը շարունակ հրապարակի վրայ է մտնում, ինչպէս սկզբում զրի, ոմանք կարծեցին և գրեցին, թէ դա նշան է, թէ իբր հայերէնը մեռնում է Ռուսաստանում, թէ իբր հայերէն չեն սովորում Այդ չափազանց է. ընդհակառակն վերջին երեսուն տարուայ ընթացքում մեր գրական լեզուն զօրացել է, ապացոյց դրան մե՞ր գրականութիւնը, ինչ գրականութիւն ունէինք մի երեսուն տարի առաջ և ինչ ունինք այժմ. տարբերութիւնը շատ մեծ է նրա համար, որ դիտէ մեր գրականութեան հին և նոր վիճակները: Այդ «մեռնել» յայտարարողները եզրակացութիւն են անում հետեանց հետու նրանք այսպէս են դատում. Ուղղագրութեան փոփոխութիւն առաջարկողներն և մտցնողները յանուն դիւրացման են անում այդ, կը նշանակէ՝ Ռուսաստանում դժուարանում են սովորել հայերէն. և եթէ այդպէս է, կը նշանակէ՝ հայերէնը մեռնում է:—Շատ լաւ, թէ կուզ հայերէնը, իսկապէս հայերէնի ուսումը մեռնում է. դա փոքր ցաւ չէ, որին պէտք է մի դարման անել: Եւ եթէ կան մարդիկ, որոնք մեր ուղղագրութիւնը թեթեւացնելով աշխատում են դիւրացնել հայերէնի ուսումը, և եթէ իրօք այդ միջոցով կարելի է մասամբ այդ ցաւի առաջն առնել, փոքր զործ չեն կատարում նրանք: Ես կարծում եմ, որ այդ մասամբ ճիշտ է: Հայերէնն անշուշտ չի մեռնում, այլ զարգանում է, բայց ոչ մեր բոլոր ուսում առած, կրթուած, մտաւորական դասի մէջ. հայերէնի, գրական հայերէնի զարգացումը հաւասար չի ընթանում հայ մտաւորականների թուի զարգացման հետ: Այս տեսակէտով, այն, հայերէնը մեռնում է: Չպէտք է մոռանալ մի խոշոր հանգամանք մեր կեանքի մէջ. մենք ունինք ստուար թուով կրթուած հայեր, որոնք իրենց ուսումն ստացել են այնպիսի դպրոցներում, որ հայերէնի ուսումնը կամ ընաւ, կամ բաւականի ժամանակ և նշանակութիւն չի տրուում: Այդպիսի ուսեալների թիւը հետզհետէ անխուսափելի կերպով աւելի պիտի մեծանայ և այժմ իսկ, կարելի է ասել, մեր կրթուածների ամենամեծ մասը հոգևոր դպրոցներում չեն սովորած: Այդպիսիներն ուրեմն այս կամ այն կերպ յարմարութիւն չեն ունենում ժամանակին հայերէնի ուղղագրութիւնը սովորելու. բայց յաճախ բաւական կոկ խօսում են գրական լեզուով. զրանք սակ յն իրենց սովորական նամակներն անգամ հայերէն չեն գրում: Եւ ինչու չեն գրում,—չառ անգամ միայն այն պատճառով որ ուղիղ գրել չգիտեն և ամաչում են սխալներով գրելուց: Սա մի

իրողութիւն է, որ շտեմանել չի կարելի. և այս իրողութիւնը քանի գնայ, պիտի թանձրանայ: Կասեն, գուցէ, թէ այդպիսիները պարտաւոր են սովորել գոնէ ուղիղ գրել, որովհետեւ ոչ մի կրթուած մարդու վայել չէ, որ իր մայրենի լեզուով գոնէ ուղիղ գրել չիմանայ: Այդ ճիշտ է. բայց այն էլ ճիշտ է, որ շտեմերը զրանցի՛յ՝ փորձում են կամ գպրոցական շրջանում կամ աւարտելուց յետոյ հայերէն գոնէ առանց տառասխալի գրել սովորել, և եթէ մէկին յաջողում է այդ, տաօին չի յաջողում, և շտեմողելու գլխաւոր պատճառն այն է ի հարկէ, որ զրանք երկար չեն յարատեւում իրենց այդ աշխատանքի մէջ. իսկ մի քանի ամսի. նոյն իսկ միամտայ աշխատանքով հնարաւոր չէ երբեք հայերէնի ուղղագրութիւնը սովորել, դրա համար աւելի ժամանակի վարժութիւն է հարկաւոր: Ուղղագրութեան դժուարութիւնն ուրեմն իւր կողմից մասամբ պատճառ է դառնում հայերէն գրութեան զուրս մղուելուն հայ մարդկանց միջից: Մի ուրս կամ Ֆրանսիացի ի հարկէ այս զժժըստ և անբնական վիճակի մէջ չէ իր մայրենի լեզուի վերարձրմամբ. նա պարոցում շատ բաւարար միջոց և ժամանակ ունի և տփայուած է սովորելու իր մայրենի լեզուն ուղիղ գրել, և սովորում է, ինչքան էլ դժուար լինի ուղղագրութիւնը: Ուղղագրութեան փոփոխութիւնն ուրեմն նրա համար չունի այն նշանակութիւնը՝ մայրենի լեզուն պահպանելու նկատմամբ, ինչ որ մեզ համար ունի: Ես չեմ ասում, ի հարկէ, եթէ մեր ուղղագրութիւնը հեշտանայ, ուստիստութիւնը կամ ուսերէն գրելը կը վերջանայ, բայց ես ասում եմ, որ եթէ ուղղագրութիւնը հեշտանայ, հայերէնի դասերի այն Յուով, որ վերջին տարիներս մտցրած են պետական գպրոցների մէջ, հայ տղայքը գոնէ այնքան ուղիղ գրել կը սովորեն հայերէն. որ չեն ամաչիլ իրենց գրած հայերէնից. ուստի և մասամբ չեն գերադասիլ իրենց մասնաւոր գործերն ու նամակներն անգամ օտար լեզուով գրել: Այդպիսիներէ համար անն որքան հեշտ լինի մեր ուղղագրութիւնն, այնքան աւելի լաւ մեր լեզուի համար:

Կը նշանակէ՝ այն հակառակութիւնը, որ ապրող գրագէտները ցոյց են տալիս ուղղագրութեան փոփոխութեան վերաբերմամբ՝ և կատի ունենալով իրենց գիւրութիւնը, (այն որ վարժուել են մի ուղղագրութեան և նորից մի ուրիշին վարժուել չեն ուզում), նոյն արժէքը չունի և չի կարող ունենալ մեր և Ֆրանսիացիների համար: Ֆրանսիացու համար դա ապրող միլիոնաւոր մարդկանց գիջում է ապագայ սերնդի գիւրութեան համար, և միայն այդքան. իսկ մեզ համար դա փոքր տոկոսով ապրող գրագէտների վիջում է ապագայ աւելի մեծ թուով գրագէտ սերնդի գիւրութեան համար. բայց այդ գիւրութիւնը չէ լոկ նպատակ, այլ միայն մի միջոց հայերի մէջ հայ գրագիտութիւնը, որով և հայ լեզուն զօրացնելու

համար: Իսկական նպատակն ահա այս վերջինն է: Իսկ այսպիսի նպատակի համար, կարծում եմ, պէտք է և պարտաւոր են մեր սահաւթիւ գրագէտները զիջում անել:

Անշուշտ, կարելի չէ գրագէտների զիւրութիւնը լուրրովին անտես անել. նրանք էլ իրենց իրաւունքն ունին. նրանց էլ դժուարութեան մէջ չպիտի դնել: Բայց այս վերջինը կը լինէր այն ժամանակ, երբ յանկարծական հիմնական փոփոխութիւններ մտցուէին մեր ուղղագրութեան մէջ, այնպէս որ բառերի հին պատկերները գրեթէ ամբողջապէս մի անգամից փոխուէին. բայց, ինչպէս տեսանք, նախ՝ այսպիսի հիմնադաւրմեծ փոփոխութիւններ մտցնել մեր ուղղագրութեան մէջ անհնարին է. ապա՝ կարելի չէ ցանկանալ որ կատարելիք մի քանի մասնակի փոփոխութիւնները մի անգամից յանկարծ տեղի ունենային. այլ դա պիտի լինի հետզհետէ, աստիճանաբար: Այսպիսի հանգամանքում որոշ չափով պահուած կըլինի և ապրող գրագէտների իրաւունքը, և նրանք ստիպուած չեն լինիլ մի անգամից հրաժարուելու իրենց սովորած ուղղագրութիւնից: Առնենք մի օրինակ: Ինչքան էլ Լ-ագրութեան յաջողութեան նպաստել են վերելում յիշած հանգամանքները, բայց այդ նորածե ուղղագրութեան տարածուելուն նպաստող ամենամեծ հանգամանքն եղել է նախ՝ այն, որ Ա. Աղայեանն և ուրիշները միայն այդ մի փոփոխութիւնը մտցրին և զրա համար միայն աշխատեցին. եթէ նրանք այդ Լ-ի հետ միասին և բաղմա թիւ ուրիշ փոփոխութիւններ անէին ուղղագրութեան մէջ, առանց սխալուելու՝ կարելի է ասել, որ նոյն անյաջողութեան կը հանդիպէին. ինչ որ ունեցել են և ունին ուրիշները. որովհետեւ, այսպէս թէ այնպէս, գերիշխողը միտ ապրող գրագէտ սերունդն է, և նա թող չի տալ, որ բառերի մեծ մասի պատկերը մի անոամից փոխուի: Ապա՝ Աղայեանի փորձի յաջողութեանը նպաստել է և այն, որ նա ու-ի փոխանակ Վ գրելով՝ նոյն իսկ փոփոխութեան ենթարկած բառերի ընդհանուր պատկերի մէջ մեծ փոփոխութիւն առաջ չի բերել. հին գրութեամբ արդէն զուարթ, նուեւ և նման գրուող բառերը սողաշարձի ժամանակ և ոտանաւորի մէջ գրում էին զրուարթ, նըւեւ, այսինքն առանց ո տառի: Աչքն ուրեմն վարժուած էր առաջուց՝ այդ բառերի պատկերն առանց ո տառի տեսնելու: Միւս կողմից վ-անշիւն ու-ն շատ յաճախուած է կրաւորականների մէջ. իսկ այստեղ մինչև այժմ ես տիրում է բաղմազանութիւն՝ գրում էին և զնս գրում են ասում ե, ասում ե, ասվում ե: Ընթերցողի աչքն ուրեմն այստեղ ես վարժուած էր տասանումեկ տեսնելու գրութեան մէջ: Բայց այդ՝ երբ ու-ի տեղ միայն Վ է գրում, բառերի պատկերի մէջ նու- տառ չի մտնում, այլ եղաւ տառերից մէկը դուրս է ձգւում. իսկ տեսնել բառերի պատկերն այս կրճատ, չարտուովչ գրութեամբ՝ վաղուց մենք

սովոր ենք ոչ միայն հին ձեռագիրներէրց, այլ և մեր ամենօրեայ աղագրութեան մէջ: Այս հանգամանքներն անա, միացած վերևում յիշածներէ հետ, նպատակ են և-սպրութեան հեշտ ընդունելի լինելուն և ծաւալուելուն:

Այս մի և նոյն ճանապարհով պիտի լինի և ամեն ուղղագրական փոփոխութիւն, եթէ պիտի լինի. այդպէս են վարուում և ուրիշ աղղերը, երբ որ և է փոփոխութիւն են մտցնում ուղղագրութեան մէջ: Այդ պայմաններն են ուրեմն.

1. Մեծ հիմնական փոփոխութիւններ, այն էլ մի անդամից երբեք հնարաւոր չէ անել.

2. Կատարուած փոփոխութեամբ նոյն իսկ մի բառի պատկերն անճանաչելութեան աստիճանի չպիտի հասնի. այսինքն և՛ մի բառի մէջ մի տառի փոփոխութիւն լինում է, միաժամանակ կարելի չէ և ուրիշ տառերի փոփոխութիւններ անել. միւս տառերի մէջ ընչքան էլ հնչիւնին համապատասխան չէ զրութիւնը, պէտք է պահել հին ուղղագրութիւնը. օրինակ կարելի չէ յաղթել բառի գրութեան մէջ մի անգամից և յ. և դ, և ք և ց տառերի գրութիւնը փոխել և գրել՝ խտտել կամ հախտել - կամ հախթել, կամ հախլիկ: Եւ կամ յետոյ բառի սկզբի յ-ն դարձնել և և վերջի յ-ն դուրս ձգել, որով մի անգամից բառի պատկերը կը փոխուի հետ և գրագէտների համար անճանաչելի կը դառնայ:

Ամեն փոփոխութիւն. եթէ պիտի լինի, որոշ սխտեմով և ճշտողնեմ, միայն աստիճանաբար պիտի լինի իսկ այսպիսի մի փոփոխութեամբ մասամբ գոնէ պահուած կը լինի ասորդ գրագէտների իրաւունքը, և այսպիսի փոփոխութիւնը միայն ընդունելի կը դառնայ ներքեում մենք կը տեսնենք, թէ ինչ մասնակի փոփոխութիւններ կարելի է անել այժմ. այստեղ անցնենք երկրորդ հիմունքին՝ բառերի ստուգաբանութեանը:

Ստուգաբանական հիմունքն ուղղագրութեան մէջ մի տեսակ հակակշիռն է հնչարանական հիմունքին. զբանով յաճախ առաջնորդում են ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու հակառակորդները: Ստուգաբանական հիմունքով, որ սիրելի է առանձնապէս գիտնականներին և բանասէրներին, պահանջում են, որ բառերը պահեն իրենց հին պատկերը: Ասում են՝ կարելի չէ օտափել, ծնող գրել, այլ միայն օտափել, ծնող, որովհետեւ սկզբում եղել են օտափել, ծնալ, իսկ հին աւ երկբարբառը դարձել է օ և ոչ ու: Այս միևնոյն է թէ ասել, որ պէտք է շօշափել ծնող գրել միայն նրա համար, որ իմացուի թէ այդ ձևերը ծագել են շաշափել, ծնալ ձևերից: Բայց ում համար է պէտք այդ, եթէ չեզոքութեան համար է, նա առանց դրան էլ շատ լաւ կը հասկանայ և կը բացատրի, որ նորագոյն շոշափել, ծնող ձևերը ծագում են հին

չօչափել, ծնօղ ձևերից, ինչպէս և վերջիններս աւելի հին շաւա-
 փել, ծնաւղ ձևերից, ինչպէս և շաւափնի ձևը հնազոյն շափափել
 ձևից է ծագումս Լեզուարանն և այն շատ լաւ գիտէ, որ հին շա-
 շափել ծնաւղ ձևերը դառնալով շօչափել, ծնօղ, այդպէս չեն մնա-
 ցել մինչև այժմ, այլ դարձել են շոչափել, ծնող: Իսկ եթէ հաս-
 շակ գրագէտների համար է այդ, նա երբեք այդպիսի բաների մա-
 սին չի էլ մտածում, նա միայն արդի հնչիւնը գիտէ. և այն որ
 շօչափել, ծնօղ, մօրուք, արօր ևլն նոյն ձևով է արտասանում, ինչ-
 պէս շոգ, նոր, մորի, շորհք բառերի մէջ ու տառը. իսկ թէ այս
 ուերն ուրիշ ծագումն ունին, քան նոյն հնչիւնները շօչափել, ծնօղ
 ելն բառերի մէջ, այդ նրա համար արժէք չունի: Եթէ շօչափել,
 ծնօղ գրութիւնները պիտի պահել միայն այդ բառերի շաւափել,
 ծնաւղ ձևերից ծագման պատճառով, ինչու ուրեմն հենց այս հին
 ձևերն ևս չպիտի պահուին այժմ, քանի որ միևնոյն է շաւափել
 գրենք, թէ շօչափել, երկուսն ևս չեն համապատասխանում այժ-
 մեան արտասանութեանը որ է՝ շոչափել:

Ֆրանսիացիք, տեսնք. առաջնորդում են այսպիսի հիմունքով՝
 պահելով բառերի հին պատկերը, որովհետև կանգնած են մի անճա-
 րակութեան առաջ, Բանն այն է, որ հնչարանական ազդեցութեամբ
 Ֆրանսերէնն այնպիսի փոփոխութեան է ենթարկուել, որ հին տար-
 բեր գրուող և արտասանուող բառերից առաջացել են բազմաթիւ
 հնչիւնական համանուններ, այսինքն տարբեր բառերից, որ հին
 լեզուի մէջ տարբեր արտասանութիւն, ուստի և տարբեր գրութիւն
 են ունեցել, առաջացել են բազմաթիւ նման ձևով հնչուող բառեր,
 որոնք տարբեր տարբեր նշանակութիւններ ունին: Եւ այս հնչիւ-
 նարանական ազդեցութիւնը Ֆրանսերէնը կրել է ոչ միայն բառերի
 տեսակների մէջ, այլ և ձևարանութեան մէջ, որի հետեանքն եղել է
 այն, որ շատ ձևեր՝ եզակին և յոգնակին, բայերի դէմքերը և այլն
 արտասանութեամբ այլ և չեն տարբերում միմեանցից: Ուստի և
 եթէ ֆրանսերէնի գրութիւնը միայն արտասանութեան վրայ հիմ-
 նուէր, գրական լեզուն յաճախ անհասկանալի կը մնար, տեղի տա-
 լով բազմաթիւ երկզիմութիւնների: Ֆրանսիացին ուրեմն ստիպ-
 ուած է նկատի ունենալ գրութեան մէջ բառերի ծագումը, ստու-
 գարանութիւնը, նա ստիպուած է գրութեան մէջ պահել բառերի
 սկզբնական գրոշմը և գրել՝ saint, sain, sein, seing, cinq, ceint.

Մեր լեզուն սակայն շատ ազքատ է այսպիսի համանուններով.
 գրաբարի շրջանից ի վեր մեր լեզուի վրայ հնչարանութիւնն այն-
 պէս չի ազդել, որ բազմաթիւ համանուններ առաջ բերէր և կամ
 քերականական ձևերը արտասանութեամբ նոյնանային: Մեր քե-
 րականական ձևերը շատ ուղ տարբերում են իրարուց. սակաւա-
 թիւ են բազաձայնների հնչափոխութեամբ առաջացած համանուն-

ները, և աւելի ևս սակաւաթիւ ձայնաւորները հնչափոխութեամբ առաջացածները, Բաղաձայնները մի կողմ թողնելով, որովհետեւ իմ կարծիքով դրանց ուղղագրութեանը զիպշի կարելի չէ, ձայնաւորներից, օրինակ, ո և օ տառերի հնչիւնների նշանաւորով բառերի միջում՝ առաջացել են ընդ ամենը երկու համանուն՝ հօս—հոս. հօր—հոր, որոնք գրութեամբ ասրբեր են. գրութեամբ նոյն՝ մի համանուն էլ գրաբարից ունինք՝ սօր (մայր) և մօր (ծանիծ): Արդ ինչպէս գրաբարից մնացած այս վերջին համանունները, թէպէտ նոյն ձևով են գրոււմ, երբեք շփոթութեան տեղիք չեն տալիս, քանի որ առաջինը սեռական-տրական հոլով է, իսկ երկրորդն ուղղական-հայցական հոլով, ուրեմն և խօսքի մէջ բոլորովին տարբեր պաշտօն վարելով՝ աշատ են երկրորդութիւնից,—նոյնը կը լինի նաև, սթէ հօր—հոր համանունները միակերպ օ-ով կամ օ-ով գրուելու լինինս կը մնան ուրեմն միայն հօս—հոս համանունները: Ո՛րքան տարբերութիւն թուի մեր և Ֆրանսերէնի համանունների. և եթէ մէ՛ օր բառերի մէջ օ տառի տեղ ո տառը գրելու լինինք, այդ փոփոխութեանն արգելք պիտի լինի այդ մի համանունը միայն՝ ոչխարի հօս. ո և վարդի հոս-ը:

Համանունների արգելքն ուրեմն, որ այնքան մեծ նշանակութիւն ունի Ֆրանսերէնի ուղղագրութեան մէջ փոփոխութիւն մըացնելու համար և որի պատճառով Ֆրանսերէնը ստիպուած է պահել ստուգաբանական ուղղագրութիւնը, բառերի հին պատկերը, որին համապատասխան չէ արտասանութիւնը, այդ արգելքը մեր լեզուի համար, բառերի մէջ օ-ի տեղ ո գրելու համար ոչ մի արժէք չունի: Եւ եթէ մէկն այսօր այդ հիմունքով պնդէ, թէ պէ՛տք է շօշափել գրել և ոչ շոշափել, որովհետեւ այդ բոլոր ծագում է շոշափել ձևից, նա այդ կանէ առանց որ և է նպատակի, լոկ ի սէր ստուգաբանութեան, որ միևնոյն է թէ լոկ ի սէր հին գրութեան:

Յայտնի է որ եւ երկրաբանն աշխարհագրում՝ սենեակ, մասեան, յարութեան ևն փոխառութիւն է գրաբարից, թէ չէ հին եւ երկրաբանը նոր լեզուի մէջ դարձած է Ե՛ լեռան—լեռ, սևա—սև, գործեաց—գործեաց, գնացեալ—գնացել և այլն: Ոչ ոքի մտքով ի հարկէ այժմ չի անցնում հնչիւնական գրութիւնները՝ սև, լեռ, գնացել, գործեաց թողնել և յանուն ստուգաբանութեան միայն գրել՝ գնացեալ, գործեաց, սևա և կարգալ՝ գնացել, գործեց, սև Բայց և ուրիշ զէպքերում ճիշտ այդպէս ենք վարուում: Գրաբարի գնայր ձևի փոխանակ մենք այժմ գրում ենք գնւ.ր, որովհետև այսպէս ենք արտասանում. բայց մի և նոյն զէպքն ուրիշ բայերի մէջ գրում ենք բեւեբ, թէպէտ արտասանում ենք բեբեբ: Ուրիշ խօսքով, բայի մի և նոյն ձևի մէջ մի անգամ չենք պահում՝ հին գրութիւնը, ուրիշ անգամ պահում ենք, եւ եթէ մէկը փորձելու

լինի ստաջարկել բերե՛ր ձեր փոխանակ բերե՛ր ձեռի, իսկոյն զրա դէմ
 կը բերեն ստուգարանութիւնը, ասելով թէ բերե՛ր գրելը սխալ է,
 որովհետեւ այդ ձեր ծագել է այս ինչ ձեռից, իսկ վերջինս այս ինչ
 ձեռից կ'ընէ:

Բայց այդ բոլորն արժէք ունի միայն զրարարի համար.
 չէ որ ինչպէս զրարարի բերե՛ր ձեռն այդ ու այդ ճանապարհներով
 ստաջացել է հնագոյն այս կամ այն ձեռից, նոյն ճանապարհնե-
 րով և հին բերե՛ր ձեր դարձել է բերե՛ր, եթէ այդ ճանապարհներն
 ու ստուգարանութիւնն իմանային մեր նախնիք և զրանով ստաջ-
 նորդս չին, այն ժամանակ մեր բառերի մեծ մասը Ե-րդ դարում
 այն պատկերը չպիտի ունենային, ինչ որ ունին. որովհետեւ նրանք
 պիտի դատէին, օրինակ, հայր բառը հնումն այսպէս է եղել, ուրեմն
 այսպէս պէտք է գրել. և աւելի հետուն ցնալով պիտի ստէին, թէ
 մեր հայր բառն այս ու այս ճանապարհներով ստաջացել է հնդեւրո-
 պական այս ձեռից. օրեմն պէտք է այնպէս գրենք, որ այդ բառի
 սկզբնական հնդեւրոպական պատկերը պահուի... Եւ ահա շատ բա-
 նում կը վերանային հնդեւրոպական լեզուների տարբերութիւննե-
 րը, որովհետեւ դրութեամբ զսնէ կը վերածուէին իրենց նախնական
 կերպարանքին... Բայց ինչ կարիք կայ զրա համար. երբ մենք
 այսօր հին գնայի, գնայր ձեռքի փոխանակ գրում և արտասանում
 ենք գնալ, գնար և երբեք կարիք չենք զգում գնայլ, գնայր գրելու
 և գնալ, գնար արտասանելու, միայն նրա համար, որ բառի հին
 պատկերը ցոյց տանք զրանով, — արդեօք կա, կարիք գրեմ, գրե՛ր
 գրելու, փոխանակ գրեմ, գրե՛ր գրելու, միայն նրա համար, որ այդ
 հին պատկերը ցոյց տանք:

Բառերը զրամի պէս են, ասում է մի լեզուաբանին. զրամը
 ձևքէ անցնելով՝ վրայի պատկերն ու գիրը ջնջւում ու անայտա-
 նում են. նոյնպէս և բառերը բերանէ բերան անցնելով մաշուել են
 և դեռ մաշուած են. ոչ միայն դժուար է նոյն իսկ, եթէ ոչ աննար,
 բառերին յետ դարձնել ընդ հին կերպարանքը, այլ և այդ հին
 կերպարանքը որոշել. «ուր մնաց որ գործածութիւնը, լեզուների
 այդ մեծ վարժապետը բացարձակ հակառակ է զրան»: Եւ եթէ մենք
 այսօր գրում ենք՝ գնար, գնալ, գնացել, ճնայլ, գրող, վաճաճող,
 ինչքան էլ դիտնականները հակառակեն զրան՝ մէջ բերելով այդ
 բառերի ստուգարանութիւնը, ոչ մի արժէք չունի այդ: Այլ ևս
 կարելի չէ այդ բառերը յետ դարձնել իրենց հին կերպարանքին:
 Դրանք այդպէս գրուել են, որովհետեւ աւտասանութիւնը պահան-
 ջել է այդպէս գրել: Եւ եթէ մենք յանուն ստուգարանութեան միայն
 պահանջէինք գրել՝ ճնայլ, գրող, գնայր, գնալ, զրանով ստուգա-
 բանութիւնը գերիշխող հիմունք կը դառնար ուղղագրութեան մէջ,
 մինչդեռ իրականութիւնն այդ չի ցոյց տալիս, այլ այն՝ որ հնչա-
 կան գրութեան մէջ գերիշխողն է և պիտի լինի հնչիւնը:

Անկախն այս ամենը, ինչ որ ասացինք, ստուգարանական հիմունքի մի կողմն է միայն, որովհետև ստուգարանութիւնն ուղղագրութեան մէջ առաջնորդ չի հանդիսանում միայն նրա համար, որ բառերի հին գրութիւնները պահուին, այլ և որ նրա միջոցով միակերպութեան վերածուին տատանուող գրութիւնները և որոշ կանոնի ու միատեսակութեան մէջ գրուին նոյն կազմութիւնն ունեցող ձևերը, Ահա մի շարք բառեր, որոնք կրկին գրութիւն ունին՝ թանգ-թանկ, գունտ-գունդ, բանտ-բանդ, վաղճամ-վախճան կայն որոնցից մէկն ու մէկի ընտրութեան համար արտասանութիւնը կամ մեզ ոչինչ չի ասիլ, կամ լոկ անզօր է առաջնորդ հանդիսանալու: Բայց պէտք է դրանցից մէկն ընտրել և միւսը թողնել. և եթէ ստուգարանութիւնը մի օր կորոշի, թէ այդ ձևերից որն ընտրելի է, այն էլ կընդունենք, միւսը կամ միւսները կըթողնենք: Ճիշտ ինչպէս բախտ և բաղդ ձևերից ստուգարանորէն ճիշտ է առաջինը և մենք այժմ ընտրում ենք այդ Դարձնալ՝ ստուգարանութիւնն ասում է, որ շեմք և շեմք գրութիւններից ճիշտ է երկրորդը: Քանի որ հին եւ կրկրաորբաոին կանոնաւորապէս համապատասխանում է ե ոչ ե. իսկ այդ բառի հին ձևն է շեամք: Աւստի և պէտք է գրել շեմք և ոչ շեմք, ինչպէս գրում են յաճախ Այստեղ ստուգարանութիւնը ոչ միայն առաջնորդ է հանդիսանում երկու գրութիւններից մէկն ընտրելու համար, այլ և նոյն ծագումն - նկցող բառերի գրութեան մէջ ընդհանուր կանոն է մտցնում: Եւ ամեն անգամ նա պիտի գործի և գործում է այս ճանապարհով. օրինակ՝ գրում ենք՝ ուրեք, ուստեք, ումեք, բայց երբեք կամ երբեք՝ Պարզ է որ ստուգարանութեամբ առաջնորդուելով նոյն խմբի և կազմութեան այս բառերի գրութիւնը միակերպութեան պիտի վերածուի և ոչ թէ երբեք պիտի գրել, այլ երբեք:

Աննենք մի ուրիշ անյարբր գրութիւն էլ բայերի ուղղագրութիւնից: Օրինակ՝ հին գնայք, գնայր ձևերի մէջ յ-ն՝ դուրս ենք ձգել և գրում և արտասանում ենք առանց յ-ի՝ գնաք, գնաւ. բայց ստուգարանութիւնը մեզ ասում է, որ հին՝ բերեք բերեք ձևերի մէջ ևս նոյն յ-ն կայ. այդ ձևերի մէջ է տառը հաւասար է ե+յ, իբրև բերեյք, բերեյր. բայց մինչ մի խումբ բայերի գրութեան մէջ գնայք, գնայր այլևս չենք գահում այդ յ-ն, որովհետև չենք արտասանում մի ուրիշ խումբ բայերի գրութեան մէջ դեռ պահում ենք թաքցրած ձևով՝ է=եյ, թէպէտև այստեղ ևս այդ յ-ն վաղուց դուրս է ընկել արտասանութիւնից և մենք բերեք բերեք արտասանում ենք բաց e ձայնաւորով իբրև բերեք, բերեք: Ստուգարանութիւնը մեզ ասում է, որ եթէ մի դէպքում այդ դէպքերից յ-ն դուրս է ընկել և գրում ենք առանց յ-ի, միւս դէպքում ևս առանց յ-ի պիտի գրել, որովհետև միակերպութեան պիտի վերածել նոյն ձևերի և նոյն կազմութեան բառերի անյարբր գրութիւնները:

Այսպէս տեսնում ենք ստուգարանութիւնն իր առանձին դերն ունի ուղղագրութեան մէջ՝ տատանուող գրութիւնների մէջ ընտրութիւն անելու համար և անյարբիր գրութիւնները միօրինակութեան գարձնելու իսկ այնտեղ, ուր մի հին հնչիւն կանոնաորապէս մի ուրիշ հնչիւնի է փոխուել, ինչպէս հին աւ-ը դարձել է օ և վերջինս էլ՝ ո, այնտեղ ստուգարանութիւնը մենակ ոչինչ չունի անելու առանց որ և է ուրիշ սկզբունքի։ Այնտեղ միայն գործնական խնդիր կարող է առաջ գալ, թէ արդեօք պէտք է պահել հին գրութեան ձևը փոխուած արտասանութեամբ, թէ պէտք է և կարելի է փոխել հին գրութիւնն և արտասանութեան համեմատ գարձնել, օգտուելով իհարկէ ժամանակակից գիտութեան ընձեռած միջոցներից։

Ամփոփելով մեր եզրակացութիւնները՝ գտնում ենք, գրական լեզուի մէջ ուղղագրութեան միակերպութիւնն առաջին անհրաժեշտ սկզբունքն է։ Պա գերիշխող պիտի լինի։ Ուղղագրութիւնը նորոգել և հնչական դրութեամբ՝ արտասանութեանը մօտեցնելը մի ընդհանր և կարևոր պահանջ է, որ լուծուած պիտի ստանայ հետզհետէ աստիճանաբար և այնպիսի ձևով, որ գրական լեզուի առաջին սկզբունքը չխախտուի։ Պատմական անհրաժեշտութեամբ աշխարհաբարի մէջ ընդունուած է գրարարի ուղղագրութիւնը, և մենք չենք կարող այդ ուղղագրութեան մէջ հիմնական մեծ փոփոխութիւններ մտցնել, առանց լեզուն ցնցումի ենթարկելու, քանի որ այժմ ես իշխում է նոյն անհրաժեշտութիւնը, որով աշխարհաբարի մէջ ընդունուած է գրարարի ուղղագրութիւնը։ Ըստ այսմ բաղաձայնների գրութիւնն անձեռնմխելի պիտի մնայ, քանի որ դրանց համար չկայ ոչ մի ընդհանուր արտասանութիւն։ Զայնաւորների գրութեան մէջ սակայն սասնակի փոփոխութիւններ կարելի է և կարևոր է մտցնել, առաջնորդելով հնչաբանական և ստուգարանական հիմունքներով, բայց միայն այն դէպքում, երբ դրանց համար կայ ընդհանուր գրական արտասանութիւն գոնէ մեր երկու գրական լեզուների մէջ։ Ասել չի ուզիլ, որ այսպիսի հանկամանքներու խօսել կարելի չէ գիտական ճիշտ ուղղագրութեան մասին, որի մէջ ամեն հնչիւն միայն մի տառով նշանակուէր և այս մի տառը միայն այդ հնչիւնի համար սահմանուած լինէր, որովհետև դա կը նշանակէ աննարբինը պահանջել։ Մենք միայն թեթև նորոգութիւններ կարող ենք անել և, կարծում եմ, որ գործնական նպատակի համար պէտք է այդ անենք, հարկաւ աշխատելով որ ամեն անելի նորոգութիւն գիտական հիմունքներով կատարուի և այնպէս, որ համապատասխան լինի մեր երկու գրական լեզուներին և ընդհանուր ընդունելի լինի։

Այ՛մ տեսնենք, թէ ինչ մասնակի փոփոխութիւններ կարելի է անել։

(Շարունակելի)

Մ. Աբեղեան.

ՄԵՐ ՌԻԳՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Կարդացուած 1913 թ. հոկտ. 14-ին Ս. Էջմիածնում
Համագրային Մեծ յօբելեանի հանդեսի ժամանակ)

Մենք տեսանք, որ հնարաւոր է միայն մասնակի փոփոխութիւններ մտցնել մեր ուղղագրութեան մէջ, այն էլ միայն ձայնաւորները գրութեան մէջ և այն դէպքերում, երբ կայ ընդհանուր գրական արտասանութիւնը հրանց համար ևս հուզէի, որ առանձին ուղղագրութեան առնուէր այստեղ գրական արտասանութիւնը, և ինչպէս խիստ տարբերում ենք բարբառները գրական լեզուից, այնպէս էլ տարբերէինք բարբառային արտասանութիւնները այն արտասանութիւնից, որ գործադրում են կամ աշխատում են գործադրել գրական լեզուով խօսողները, և որ ընդունուած է ընդհանրապէս մեր դպրոցներում: Ինչքան էլ մեր գրական լեզուն դեռ նոր է, և մենք շունենք գրական լեզուով խօսող մեծ և յարմարաւոր չըջաններ, որ մի օրինակելի գրական արտասանութիւն մշակէին. ինչքան էլ մեր թատրոնը, որ մեծ դեր պիտի ունենար այս գործի մէջ, գրեթէ բան չի արել այս մասին՝ երկար տարիներ թիֆլիսի բարբառը հրասցնելով մեզ, բայց և այնպէս դպրոցը բնականօրէն մեծ ծառայութիւն է արել և որոշ չափով միօրինակութեան է վերածել մեր բազմազան բարբառային արտասանութիւնները գրական լեզուի մէջ, և մենք այսօր որոշ ասուեր, կարելի է ասել, ընդհանրապէս միակերպ ենք արտասանում գոնէ դպրոցում և կամ երբ ուզում ենք գրական լեզուով խօսել: Թէ ինչպէս է սկսուել և օտարածուել այդ արտասանութիւնը, այդ մասին այստեղ խօսելու չէ: Բայց այս պիտի կրկնեմ, որ ինչպէս գրական լեզուն ոչ մի բարբառ չէ, այնպէս և մեր դպրոցական արտասանութիւնը ոչ մի բարբառի չէ. դա նոյնպէս մի խառնուրդ է զանազան բարբառների արտասանութեան՝ մի բարբառի հիմքի վրայ, ինչպէս և գրական լեզուն: Այլ՝ ինչպէս մեր գրական լեզուններն երկու են, նոյնպէս և մեր գրական կամ դպրոցական արտասանութիւնները, բայց և այնպէս, որքան ևս կայողացել եմ դիտել, մեք երկու գրական լեզուների մէջ ձայնաւորներն ընդհանրապէս միակերպ են արտասանուում: Այստեղ մեր երկու դպրոցական արտասանութիւնները միանում են և այս ընդհանուր կէտում միայն հնարաւոր է մեր

ուղղագրութեան մէջ փոփոխութիւն մտցնել: Առաջուց պիտի ա-
տեմ, որ ինչ որ ես ներքևում առաջարկում եմ իբրև հնարաւոր
փոփոխութիւն, դա լոկ ակադեմիական քննութիւն է, և ոչ ինձ և
ոչ ուրիշների համար իրաւունք չեմ համարում իմ հնարաւոր հա-
մարած և առաջարկելի փոփոխութիւնները գործադրելու:

Ձայնաւոր հնչիւնները մեր գրական լեզուների մէջ վեց են՝
ա, է, ը, ի, օ, ու: Այս վեց ձայնաւորներից երեքը ա, ը, ի, ոչ
մի դժուարութիւն չեն պատճառում. որովհետեւ դրանց համար մի-
այն մի մի նշանագիր կան, և այդ նշանագրերից իւրաքանչիւրը
միայն մի հնչիւնի է յատկացուած: Հնչական գրութիւնն ուրեմն
դրանց համար կատարեալ է: Անշուշտ ը ձայնաւորի չգրուելը բառե-
րի մէջ, որ իր առանձին պատճառներն ունի, կարող է գրել-չգրել-
լու խնդիր հանել, բայց դա առանձին դժուարութիւն չէ պատճա-
ռում, և ամեն անգամ բառերի մէջ երբ արտասանում ենք այդ
հնչիւնը և ուզում ենք գրել, գրում էլ ենք, ինչպէս տողադարձի
ժամանակ և ոտանաւորների մէջ: Ես այդ ձայնաւորի գրել-չգրելու
հարցը չեմ կարող դնել, որովհետեւ դա շատ դժուար լուծելի խն-
դիր է և իմ կարծիքով ամենայամար միջոցը դրա համար հենց
այն է եղել, որ չենք գրում բառերի մէջ: Մնացած երեք ձայնա-
ւորների համար կան հինգ տառ՝ ե, է, ո, օ, լ, և վեցերորդ ու
երկտառը, որ նշանագիր է պարզ ու ձայնաւորի, որը ինչպէս ըն-
գուեում են, յունարէնի նմանութեամբ է այդպիսի երկտառով
նշանագրուել: Արդ, մեր այդ երեք պարզ ձայնաւորներից առա-
ջինի՝ է հնչիւնի նշագրերն են է և ե տառերը, բայց դրանցից ե
տառը բառերի սկզբում նաև յե երկրարբառի նշան է, իսկ յե երկ-
րարբառը բառերի մէջ արտայայտուում է նաև յե, յկ ձևերով. երկ-
րորդի՝ օ հնչիւնի նշանագրերն են օ և ո տառերը, բայց սրանցից
ո տառը բառերի սկզբում նաև վո կապակցութեան նշան է, իսկ
վո կապակցութիւնը բառերի մէջ արտայայտուում է նա՛ վո, լո, ու՛
ձևերով. երրորդի՝ ու հնչիւնի նշաններն են լ և ու. բայց սրանցից
լ տառը միայն իւ երկրարբառի մէջ այդ ու հնչիւնի նշանն է, իսկ
բառերի մէջը նաև վ բաղաձայնի նշան է, նոյն իսկ իւ երկրարբառի
համար սահմանուած կապակցութեամբ որոշ անգրում. ապա ու
երկտառն ևս ձայնաւորից առաջ վ բաղաձայն է: Եւ ահա մի պարզ
հնչիւնական գրութեան փոխանակ ունինք մենք մի խառն գրու-
թիւն, որ բաւական դժուարութիւն է պատճառում: Սկզբնական
չբջանում մեր լեզուի գրութիւնը չի ունեցել այս գրութիւնը. դա
պատմականօրէն առաջացած գրութիւն է, իբրև հետեանք այն բանի,
որ հնչիւնները բառերի մէջ փոխուել են, իսկ գրութիւնը մնացել է
հինը:

Գրականութեան մասին հարցերը կարող է արժեքաւորել միայն միջոցառումները:

Օ—Ո

— ա՜յ Աստուծո՛ր ամենից առաջ օ հնչիւնի գրութիւնը: Յայնմ է, որ մեր հին լեզուն ունի օ ձայնաւորը, որի նշանն է՝ ո՝ տառը: Այս ո՛ւր օ պարզ ձայնաւորը մի հնչափոխութեամբ, որ յատուկ է ոչ միայն հայերէնին, այլ և ուրիշ լեզուների, որոշ բարբառների մէջ դարձել է երկբարբառային և արտասանում է իբր՝ ուօ, այսինքն պարզ ձայնաւոր օ հնչիւնն սկզբից ստացել է բաղաձայնական ու ձայնաւորը՝ ուօսպ, ուօղուօրմի, ձուօր, ապա ուրիշ բարբառների մէջ, սովորական հնչափոխութեամբ, այս ուր երկբարբառի սկզբի բաղաձայնական ունն յաջորդ ձայնաւորից առաջ դարձել է վ բաղաձայն՝ վօսպ, վօսկի, վօր, մինչդեռ ուրիշ բարբառներ ևս մինչև այժմ թէ բառերի սկզբում և թէ մէջը պահում են հին մաքուր ուր օ հնչիւնը՝ ոսպ, ոսկի, օր, ողորմիօսպ, օսկի, օր, օղորմի:

Արդ, ինչքան էլ բարբառները այս հին ուր ձայնաւոր հնչիւնը տարբեր են արտասանում, բայց մեր արևելեան և արևմտեան գրական լեզուների մէջ ընդունուած է մի ընդհանուր դպրոցական արտասանութիւն, այն է՝ բառերի մէջ ո ձայնաւորի համար մենք դեռ պահում ենք նրա սկզբնական օ հնչիւնը, իսկ բառերի սկզբում նոյն ձայնաւորն ընդհանրապէս արտասանում ենք զօ վանկ՝ հին ողորմի բառն արտասանում ենք ոչ հին ձևով, ոչ էլ իբրև ուղորմի: այլ իբրև վօղորմի: Սրանից առաջացել է այն ուղղագրական դժուարութիւնը, որ վա վանկը բառերի սկզբում գրում ենք մի ո տառով, որ բառերի մէջ օ պարզ ձայնաւորի նշանն է:

Միւս կողմից հնչափոխութիւնն առաջ է բերել մի նոր օ ձայնաւոր մի խումբ բառերի մէջ, որ սկզբնապէս օ ձայնաւոր չեն ունեցել, այլ աւ երկբարբառ: Այն է՝ հին աւ երկբարբառն անփոփոխ չի մնացել, այլ դարձել է օ ձայնաւոր, բայց միջնադարում աւ երկբարբառից ծագած այս օ հնչիւնն անպայման տարբեր, գուցէ երկար է եղել հին ուր օ ձայնաւորի հնչիւնից, քանի որ, սակաւ բացառութեամբ, հին աւ երկբարբառը չեն վերածել ո տառի, այլ մի նոր տառ են մտցրել մեր այբբենարանի մէջ այդ աւ երկբարբառից ծագող օ հնչիւնի համար: Երկու օ հնչիւնի այդ միջնադարեան տարբերութիւնը սակայն չի մնացել մինչև օրս. մենք այսօր հին աւ երկբարբառից ծագող այս նոր օ ձայնաւորը գրական լեզուների մէջ ճիշտ նոյն ձևով ենք արտասանում, ինչպէս հին լեզուի մէջ ո ձայնաւորը. բայց գրութիւնը, սակաւ բացառութեամբ, չենք չուս տուել ո տառի, այլ պահում ենք միջնադարեան օ տառով: Մենք ունինք ուրեմն մի և նոյն պարզ օ հնչիւնի համար երկու տառ: Հետահըրը լինում է այն, որ ո և օ տառերի գրութիւնները

բնականաբար շփոթուում են իրար հետ։ Դժուարութիւնն աւելի նրանով է մեծանում, որ չկայ ոչ մի կանոն, որով կարելի լինի առաջնորդուել, թէ երբ բառերի մէջ ու երբ օ պէտք է գրել։ Միակ կանոնն այն է, որ պէտք է առանձնապէս սովորել օ-ով գրուող բառերը, քանի որ դրանք սակաւաթիւ են։

Այժմ հարց է կարելի է արդեօք այդ երկու տառերից մէկը դուրս ձգել։ Նախ՝ եթէ կարելի է, որն արդեօք։ Այս հարցը դնում եմ այստեղ, որովհետեւ կան մարդիկ, որոնք այս երկու տառերից մէկն աւելորդ համարելով՝ ու տասն են դուրս ձգում, առանց մտածելու, որ եթէ օ-ով գրուող բառեր մի քանի տասնեակ միայն ունինք, օ-ով գրուող բառերի թիւը հազարներով է, ուստի եթէ բառերի գրութեան մէջ պէտք է փոփոխութիւն մտնի, սակաւաթիւ բառերը թողած՝ չպիտի հազարաւոր բառերի ուղղագրութեանը գիպչել։ Այս առաջանում է նրանից որ ու տառը բառերի սկզբում վն է արտասանուում, մինչ օ տառը միայն օ հնչիւնի նշան է, և մէկ էլ այն սրտից, որ ու տառի անունը մեր դպրոցներում սովորեցնում ենք իբրև վն վանկ և ոչ ու օ պարզ հնչիւն. մի սխալ, որ, միջանկեալ ասեմ, երեխաներին մեծ դժուարութիւն է պատճառում, ու վն սովորած լինելով նրանք երկար ժամանակ թագաւոր և նման բառերը գրում են թագաոր կին։ Ապա նոյն սխալը դործում են շատ յաճախ և նրանք, որ բառերի հին ուղղագրութեանը չեն գիպչում, բայց օտարազգի բառերը գրում են օ տառով, առանց մտածելու, որ օ տառը յատկապէս աւ երկրորդայնից ծագող օ հնչիւնի համար է մտած մեր այբբենաբանի, և որ օտարազգի օ հնչիւնին համապատասխան հնչիւն ունի մեր ու տառը, որով և սկզբից սառագարձել են օտարազգի անունները. այդպէս վարուողները միամտաբար աղբւրում են մեր օ և եւրոպական օ տառերի ձևից միայն, առանց մտածելու, որ դրանով միայն օ-ով գրուող բառերի թիւն են շատացնում, որով և ուղղագրութիւնը աւելի դժուարացնում։ Եթէ պէտք է մեր այս երկու տառերից մէկն ու մէկը դուրս ձգել, ապա դա պէտք է լինի միայն օ տառը, նախ նրա համար, որ ու տառը պահել է իրեն յատուկ հին հնչիւնը և այս հնչիւնին է վերածուել աւ երկրորդայնի անցնելով միջնադարեան, հաւանօրէն երկար, օ հընչիւնից, և ապա՝ որ զլիսաւորն է՝ օ-ով գրուող բառերի թիւը համեմատաբար շատ փոքր է, ուստի և այս փոփոխութեամբ շատ աւելի քիչ բառերի պատկեր կը փոխուի։

Քանի որ հին ու միջնադարեան օ տառերն այժմ կատարելապէս նոյն հնչիւնն են արտայայտում գրական լեզուի մէջ, կը նշանակէ հնչարանութեան տեսակէտից ոչ մի արգելք չկայ օ տառը դուրս ձգելուն։ Ինչպէս որ մենք այժմ գրում ենք՝ ծնող, գրող, զարմացող կն փոխանակ հին՝ ծնօղ, գրօղ, զարմացօղ և աւելի ևս

հին ճնաւղ, գրաւղ, զարմացաւղ գրութիւններին, և ոչ մի հնչիւնակա՛ն արգելք չենք գտնում գրա համար, նոյնպէս ոչ մի արգելք չկայ գրելու, քող, մոտ, առաւտոտ, ամօթւ Համանունների վտանգն էլ չկայ և, ինչպէս վերեւում տեսանք, գրանց ծագումը, ստուգաբանութիւնը նշանակութիւն չունի: Միակ դժուարութիւնն ուրեմն մնում է այն, որ այդ փոփոխութեամբ որոշ թուով բառերի պատկերը կը փոխուէր և հին սերնդի գրագէտների աչքը կը ծակէր՝ տեսնել շօշափել, տթթ, կրոն եյն:

Մեր նախնիքն այս նկատմամբ շատ աւելի ազատ են շարժուել. նրանք աւ երկրարբառոց ծագող օ հնչիւնի համար այբբենարանի մէջ նոյն իսկ նոր տառ են մտցրել. հին եւ=eu երկբարբառն երբ իւ=iu է դարձել, այսպէս և գրել են. հին ասեի, ասելիք, ասեաք, ասելիք, ասեին ձևերի մէջ յօրանջը (հիատոււք) վերացել է և մէջը մտել է յ կիսաձայնը՝ իրրն ասելի, ասելիք ելն. ուստի և գրել են է տառով՝ ասէի, ասէիք, եայն, քանի որ է տառն է փոխանակում էլ երկրարբառին: Եթէ նրանք այսպէս են վարուել, կարելի է ասել, որ եթէ հին աւ երկրարբառն այժմեան ձևով ու=օ արտասանուելիս լինէր, այդպէս և գրած կը լինէին, ինչպէս և գտնում ենք ող ածանցի և մի քանի ուրիշ բառերի մէջ: Եւ եթէ այսօր մենք քող, ամօք գրենք, ուրիշ սկզբունքով վարուած չենք լինի, քան մեր նախնիք վարուել են:

Սակայն այս խնդիրն երկու կողմ ունի օ տառը բառերի սկզբում և բառերի մէջը: Մինչգեւ բառերի մէջ օ-ի տեղ ս գրելն առանձին դժուարութիւն չունի, բառերի սկզբում կարելի չէ օ-ի տեղ առանց այլեայլութեան ս գրել, որովհետև այս ուն դպրոցական արտասանութեամբ վն վանկ է. ուստի եթէ օրհնել գրելու տեղ այժմ օրհնել գրուի, կը կարդացուի փոհնել. հին աւելի=օելիք գրուած լինելով սելիք՝ այժմ կարդում ենք վնելիք: Եւ քանի պատշաճում է այս դպրոցական արտասանութիւնն ու գրութիւնը բառասկզբի օ-երի համար՝ մեր այբբենարանից նորամուտ օ տառը գուրս ձգել կարելի չէ. այս կարելի է միայն այն ժամանակ անել, երբ բառասկզբի վն հնչիւնը հենց այսպէս էլ կը գրուի, ինչպէս այժմ գրում ենք օտարազգի անունները, և մենք վարժուած կը լինինք այդ գրութեանը: Բառասկզբի օ-երը օ-ի վերածելն ուրեմն ուղղագրութեան մէջ փոփոխութիւն մտցնելու մի երկրորդ աստիճանը պիտի լինի, եթէ միայն երբ իցէ պիտի լինի. և իբրև այդպիսին դա ապագայի խնդիր է: Այժմ այդ անել չենք կարող և այն պատճառով, որ այժմեան արտասանութեամբ կարելի չէ բառասկզբի ս-երը վն ձևով գրել, որովհետև ինչքան էլ բառասկզբի ս-ն արտասանում ենք ընդամենապէս իբրև վն, բայց շատ բարբառների մէջ գիւս օ է արտասանուում, ինչպէս և Արարատեան բարբառի մէջ բազմամանկ-

ներքի սկզբում. ուստի գրական լեզուի մէջ եւ ողորմել, ործկալ, ոսկոր, որոճալ, ոլորել, որմին, ոլորելն ելն յաճախ արտասանում ենք. օղորմի, օրծկալ, օսկոր ելն, ինչպէս և ով, ովկիանոս բառերի մէջ: Գուցէ ժամանակ կը գայ, որ բառակցքի ո-երի այս տասանումը բոլորովին կը վերանայ գրական լեզուից, քանի որ զպրոցներում միայն վն ձևով են սովորեցնում. և նարաւոր կը լինի բառակցքի ո-երը վն ձևով գրել, բայց այդ գուշակել կարելի չէ, կարող է և հակառակ երևոյթը հաստատուել, այն է՝ բառակցքի ո-երի համար գոնէ բաղմամբանկ բառերի մեծ մասի մէջ կարող է հաստատուել և օ հնչիւնը:

Այսպէս ուրեմն քանի որ կայ բառակցքի ո=վն գրութիւնը, մենք չենք կարող այժմ բառակցքի օ-երի գրութիւնը ո-ի վերածել: Նոյն իսկ եթէ նարաւոր համարուի բառակցքի ո-երը վն ձևով գրել, դարձեալ քանի այդ գրութիւնը չի մտած և ընդհանրացած, անհնարին է բառակցքի օ-երը ո-ի վերածել:

Այս մի և նոյն առարկութիւնը սակայն կարելի չէ անել բառակցքի օ-երը ո-ի փոխելու նկատմամբ, այստեղ արդէն ոչ գրական լեզուի մէջ արտասանութեան տատանում կայ և ոչ էլ փոփոխութեան մի առանձին աստիճան է հարկաւոր:

Վերևում գրուած բացատրութիւններից պարզ պիտի լինի, որ պահելով բառակցքի օ-երը՝ եւ ոչ մի արդելք չեն գտնում բոլոր բառերի մէջ օ տասի տեղ ո գրել: Ըստ ինքեան հասկանալի է, որ ո պիտի գրել անպայման նաև օտարազգի բառերի մէջ, ինչպէս և սովորաբար ընդունուած է, այլ և այն բոլոր բառերի մէջ, որոնք ժողովրդից առնուում են գրական լեզուի մէջ, ինչպէս նորքեր:

Այսպիսի փոփոխութեամբ շատ բառերի ընդհանուր պատկերը չի փոխուիլ, քանի որ օ-ով գրուող արմատները, անգործածականներն և հաշուած, անառաւելն հարիւր հատ են: Բայց զբա փոխանակ որքան աւելորդ աշխատանքից ազատ կը լինին ներխաները, և որքան կը հնչատանայ մեր ուղղագրութիւնը մօտենալով արտասանութեանը. որովհետև օ-ի գործածութիւնը կը սահմանափակուի միայն բառերի սկզբում, ընդամենը մի՛ 25 արմատ, ուր արդէն թէպէտ ոչ անսխալ, առաջնորդ կարող է լինել այն, որ ո-ն բառի սկզբում սովորաբար խորն վն է արտասանում: Ըստ այսմ ո և օ տառերի գրութիւնը կանոնի կը վերածուի նետեակ ձևով.

1. Բառերի մէջ օ հնչիւնը գրուում է միշտ ո տառով, իսկ բառերի սկզբում՝ օ տառով (բայց ով, ովկիանոս):

2. Բառերի սկզբում վն վանկը գրուում է ո տառով:

Այս կանոնի մէջ միակ բացառութիւնը պիտի կազմի եօ=յն երկբարբառը եօթն, արդեօք, կարծեօք բառերի մէջ: Եւ այս բա-

ցատութիւնը զնուս եւ, որովհետեւ զրա փոփոխութիւնը կայուած է երկրարբառների ընդհանուր գրութեան հետ, որ նոյնպէս խառն է. իսկ երկրարբառների գրութեան մէջ փոփոխութիւն մայնել ևս այժմ հնարաւոր չեմ համարում. եթէ եօ երկրարբառի գրութիւնը փոխելու լինենք, դա ոչ թէ եօ պիտի լինի, այլ յօ. ուրեմն աղոյժ, յոթն, կաթձոյժ, որով առաջ կը գար մի անգամից մի և նոյն բառի մէջ կրկին փոփոխութիւններ, և յատկապէս այնպիսի փոփոխութիւններ, որոնց նմանին մեր աչքը բնաւ վարժուած չէ, և որոնցից յոթն բառը, քանի որ սկզբի յ տառը ճ ևնք արտասանուած, չի կարգացուիլ եօթն, այլ հոթն:

Ե—Լ.

Երկրորդ ձայնաւորները, որ շփոթուում են, են Ե և Է. Սկզբնապէս այս երկու տառերը տարբեր հնչիւնների նշանագիր են եղել. Ե-ն եղել է կարճ Է հնչիւնի նշան, իսկ Է-ն՝ երկար Է, ոմանց կարծէքով փակ Է. Բայց ժամանակի ընթացքում այս երկու հնչիւնը փոփոխութեան են ենթարկուել: Մի կողմից Է հնչիւնը կորցրել է իր ամանակը կամ երանգը և դարձել է կարճ և բաց Է, այսինքն նոյնացել է հին Ե հնչիւնին: Միւս կողմից՝ այս Ե հնչիւնն ևս, ճիշտ ինչպէս ռ ձայնաւորը, սկզբից բնորոշելով բաղաձայնական իւր ձայնաւորը՝ դարձել է երկրարբառային, որոշ բարբառների մէջ բառերի թէ սկզբում և թէ մէջը. եզ. մեզ: Արարատեան բարբառի մէջ սակայն, բացի միավանկների սկզբից, Է տառը պահել է սովորաբար իր սկզբնական արժէքը՝ երկու, երկար, եկաւ արտասանուում են իբրև էրկու, էրկար, էկաւ: Գրական լեզուի մէջ սակայն բնորոշուած է բառերի սկզբի Ե-երն արտասանել իբրև յԵ, իսկ բառերի մէջ հին արտասանութեամբ իբրև Է. երեկոյս=չերեկոյս Այստեղ մենք տեսնում ենք մեր ուղղագրութեան մէջ երկու անկատարութիւն. նախ՝ բառերի սկզբում յԵ երկրարբառը գրում ենք մի տառով, որ բառերի մէջ Է հնչիւնի նշան է. ապա՝ բառերի մէջը և սակաւաթիւ բառերի սկզբում մի և նոյն հնչիւնը գրում ենք երկու տառով՝ Ե և Է:

Հնչիւնական կատարեալ ուղղագրութեան համար մի և նոյն Է հնչիւնի համար մի նշանագիր պիտի լինէր. ուստի Է և Է տառերից մէկն աւելորդ է. եթէ գրանցից մէկը գուրս պիտի ձգուի, դա պիտի լինի Է տառը և ոչ Ե, քանի որ առաջինն ամենաշատը 115 բառի և բայերի որոշ վերջաւորութիւնների մէջ է երևան դալիս, իսկ Է-ն հազարաւոր բառերի և բազմաթիւ քերականական ձևերի մէջ: Ուստի և սխալ են անում նրանք, որ առաջնորդուելով այդ սկզբունքից, Է տառն են գուրս ձգում, և ոչ միայն օտարազգի բառերն է-ով են գրում, այլ և հայերէն բառերը: Առաջուց կարելի է ասել, որ այդպիսի փոփոխութիւն չի անց կենալ. որովհետեւ մի հարիւր բառի

պատկեր թողած, հազարաւոր բառերի պատկեր չի կարելի փոխել: Բայց այդ՝ ոչ թէ և տառն է և տառի հնչիւնին փոխուել. այլ ընդհակառակն, և-ն պահել է իր հին բաց օ հնչիւնը և երկար կամ փակ և-ն դարձել է և:

Բայց կարելի է արդեօք և տառը զուրս ձգել և պահել միայն և տառը: Իմ կարծիքով այժմ կարելի չէ այդ անել. Նախ՝ չենք կարող բառերի սկզբի և-երը առանց այլևայլութեան և դարձնել. որովհետև այդ բառերը թէպէտ սակաւաթիւ, ընդամենը 8, է, էզ, էչ, էջ, էջ, էր, էգուց, էրիկ. և բարբառային՝ էս, էդ, էն նայն, որոնք սկսուում են է-ով և յի չեն արտասանուում եթէ չլինէին այս բառերը, այն ժամանակ և տառը նշանագիր կը լինէր և ձայնաւորի և բառասկզբի յի երկարբառի. և ուղղագրութեան մէջ մի ընդհանուր կանոն կը լինէր, թէ ամեն անգամ և հնչիւնը և բառասկզբում յի երկարբառն արտայայտուում են և տառով, Բայց այժմ այդպիսի կանոն ընդհանրացնել չի կարելի, քանի որ կան բառեր, թէպէտ սակաւաթիւ, որոնք և-ով են սկսուում և յի չեն արտասանուում Իսկ այդ բառերը և-ով գրել կարելի է միայն այն ժամանակ, երբ բառասկզբի յի արտասանուող և-երը յ-ով սկսուէին: Իսկ այս վերջինն էլ անել հնարաւոր չէ, քանի որ ինչքան էլ գրական լեզուի մէջ ընդունուած է բառասկզբում և=յի արտասանութեանը, բայց բարբառների ազդեցութեամբ յաճախ արտասանուում ենք երկու, երեւալ իբրև էրիու, էրևալ, Բացի այդ՝ բառասկզբում յի ձևով գրելը կապուած է երկարբառների գրութեան փոփոխութեան, ինչպէս և յ-ով սկսուող բառերի գրութիւնը և-ով գրելու խնդրի հետ: Մինչև սրանք չը լինեն, առաջինը չի լինիլ. Այսպէս ուրեմն բառասկզբի և-երը և դարձնելը ուղղագրութեան մէջ մացնելի փոփոխութեան մի երկրորդ ատիճան է. ինչպէս և բառասկզբի ո-երը վն ձևով գրելը. իսկ իբրև իբրև այդպիսին, կարելի չէ այժմ առաջարկել: Բառերի միջի և-երն ևս չենք կարող անխտիր և դարձնել. որովհետև կան սակաւաթիւ բառեր, որոնց մէջ եթէ ևս կապակցութեան փոխանակ ևս կապակցութիւնը գրուի, չփոթութիւն առաջ կը գայ, քանի որ վերջինս յա երկարբառի համար է, Բրիտանացեան գրութիւնը Բրիտանացեան չի կարգացուի, հարկաւոր է ուրեմն նախ ևս երկբարբառի գրութեան ձևն ևս փոխուած լինի յա: Այս տեղ ևս ուրեմն է-ի փոխանակ և գրելը դարձեալ փոփոխութեան մի երկրորդ ատիճան է: Կը նշանակէ մենք չենք կարող բառերի մէջ և տառի վերաբերմամբ վարուել այնպէս, ինչպէս ու տառի վերաբերմամբ. այսինքն չենք կարող պահելով բառերի սկզբի և և և տառերը, բառերի մէջը միշտ և գրել:

Բառերը մէջը և տառը երևում է բայերի որոշ վերջաւորութիւնների մէջ՝ ասէ, ասէի, ասէիր, ասէր, ասէիք, ասէիք, ասէին,

ասէք, ասացէք, որոնց ուղղագրութիւնը կապուում է քերականութեան հետ: Այս ե-երի ծագումը փոքր ինչ տարբեր է. հնագոյն ուղղագրութեան մէջ հ-ով եղել են միայն ասե, ասեռ, ասեհ, ասացեհ ձևերը փոխանակ ասել, ասելր, ասելհ, ասացելհ ձևերի Բայց այժմ այդ յ-երն այլ եւ չեն արտասանուում, ինչպէս որ գնայ, գնայր, գնայք ձևերի մէջ. բայց մինչ վերջիններս գրուում ենք առանց յ-ի գնար, գնար, — առաջին ձևի մէջ պահուում ենք անձայն յ-ն, նոյնպէս եւ հ=ել գրութիւնների մէջ. Այս գրութիւնն այժմեան արտասանութեանն այլ եւ չի համապատասխանում, իսկ դրա ստուգարանական արժէքը մենք վերնում տեսնք: Բայերի միւս ղէմքերը սկզբնապէս գրուել են՝ ասեի, ասելիր, ասեաք, ասելք, ասելիս Է-ով գրութիւնները յետագայում են ծագած, երբ երկու ձայնաւորների մէջ յօրանջը վերացել է եւ մտել է յ կիսաձայնը, ինչպէս յատուկ է մեր նոր յեզուին. եւ որովհետեւ վերեւի ձևերն արտասանուել են, ինչպէս այժմ են արտասանուում՝ ասելի, ասելիր, ասելաք, ասելիք, ասելին, եւ որովհետեւ ել=է, ուստի գրել են ասէի, ասէիր ելն: Բայց այժմ է տառի հնչիւնն այլ եւս հաւասար չէ ե+յ, այլ դա հաւասար է պարզ հ=հ հնչիւնի. ուստի հ-ով գրութիւնն այստեղ այլ եւս ոչ մի իմաստ չունի այժմ. հենց այդ պատճառով անգրագէտները յաճախ արտասանութեանը հետեւելով գրուում են ասէլի, ասէլիր... կամ ասելի, ասելիր: Մի կողմ թողնելով երկու ձայնաւորի մէջ յ կիսաձայնի գրութեան խնդիրը, մենք տեսնում ենք, որ բայերի վերջաւորութիւնների նկատմամբ Աս մեր նախնիք փոխել են ուղղագրութիւնը մօտեցնելով արտասանութեանը, հ-ի տեղ հ=ել գրելով. բայց այդ փոփոխութիւնն այլ եւս այժմեան արտասանութեան չի համապատասխանում, ուստի եւ մենք կարող էինք վերագրանալ հնագոյն ուղղագրութեանը եւ գրել՝ ասեի, ասելիր ելն՝ սր համապատասխան է այժմեան արտասանութեանը:

Բառերի մէջ հ տառը երկուս է յաճախ այն ժամանակ, երբ բառակազմութեան մէջ հ հնչիւնը փոխուում ի հնչիւնի՝ սէր—սիրել: Կարող է արդեօք այս ձայնափոխութիւնն արգելք լինել. որ այդ կարգի բառերն եւս հ-ով գրուեն: Իմ կարծիքով ոչ. Արդարեւ բառակազմութեան համար անհրաժեշտ է իմանալ թէ՛ որ բառերի մէջ հ հնչիւնը փոխուում է ի հնչիւնի, որպէս զի նոր բաղադրութիւնները սխալ չկազմեն, բայց այս ուսումը ըզուրի աւելի մեծ հմտութիւն է պահանջում, եւ ուր բառակազմութիւն է ստորում, նա կարող է սովորել եւ այն, որ մի քանի տասնեակ բառերի վերջին փակ վանկի հ հնչիւնը փոխուում է ի հնչիւնի, ճիշտ ինչպէս այժմ սովորում ենք. թէ այդ է-ն փոխուում է ի-ի, բացի անուէս, անէզն ևն բառերից եւ թէ զեւ բառի մէջ եւս հ հնչիւնն է փոխուում ի ձայնաւորի: Աւելի զարգացած շրջանում կը բացատրուի, թէ այդ մի քանի

տասնեակ բառերի և ձայնաւորը փոխուում է ի, որովհետև սկզբնապէս գրանք հ-ով չեն արտասանուել և գրուել, այլ է-ով. ինչպէս որ այժմ բացատրոււմ ենք, թէ այդ է-երը փոխուում են ի, որովհետև այդ է-երը սկզբնապէս նոյն արտասանութիւնը չեն ունեցել, հաւասար հ-ի, այլ տարբեր: Բացատրութիւնը այս թէ այնպէս տրուի՝ էութիւնը միևնոյն է:

Այսպէս ուրևին ևս բառերի մէջը և վերջը է-ի փոխանակ ամեն դէպքում և գրելուն հնչարանական ոչ մի արգելք չեմ գտնուում նոյն իսկ բայերի վերջաւորութիւնների մէջ և այն բառերի մէջ, որոնց է-ն փոխուում է ի, բացի միայն մի դէպքից, երբ եա կապակցութեան տեղ զնկելով եա՝ կարող է չփոխութիւն առաջ գալ եա երկբարբառի հետ:

Այս փոփոխութիւնը սակայն մի անդամից անելը գծուար է, որովհետև քերականական ձևերի պատճառով շատ բառերի պատկերը փոփոխուում էր Ուստի առայժմ պիտի բաւականանալ միայն այնպիսի փոփոխութեամբ, որով հ-ով գրուող բառերի մէջ որոշ սխտեմ և կանոն կը մտնի.

1. է-ն պահել բառերի վերջում, քանի որ այս գրութիւնն ընդհանուր ընդունուած է, և շատ որոշ է:

2. է գրուում է բառերի սկիզբն ու մէջը, փակ վանկերում, երբ այդ է-ն փոխուում է ի ձայնաւորի (բացառութիւն հ՛ն ձայնարկութիւնը):

3. Բառերի մէջը և սկիզբը, բարբառային, երբ ծագում է, այ երկբարբառից՝ էս, էդ, էգուց, էրիկ, գէս, գէն ևն: Վայր ընկնել վեր ընկնել:

4. Բառերի սկիզբն ու մէջը ա, ի, ո, ու ձայնաւորներից առաջ:

Այս դէպքում էանոնի տակ չեն մտնում միայն բայերի եր, եք վերջաւորութիւնները:

Այստեղ ուղղագրութիւնը զիւրանում է նրանով, որ այն բոլոր բառերը, որոնք գրուում են բազմաձայնից առաջ է-ով, բայց այս է-ն չի փոխուում ի, պէտք է գրել հ-ով. ինչպէս՝ աղուես, զմբեթ, պատճեն, եղեգն, ծակոտկին, խեժ, հրեչ, պարեն, երբեք, հենց, մեկ, ախտաժեստ, ննեղաժեստ, ախեստ, բղեղ, դազպեն, զեթ, դոմնչ, խլեղ, ծուենք, կեստ, կոճղեղ, մողես, շահեն. պարեստ. վետ-վիտ, վիչ, ամեն, խայտաբղեստ, պարեստ կայլն: Թեպես, թեկող, այսպէս և աւետ, արեն, երեն ամանցները: Այսպէս և տերութիւն, տերունական, պարանաբ, տասնումակերորդ չեկութիւն, տնօրենութիւն, անօրենութիւն, զեչութիւն, պետքական ևն: այսինքն այն բոլոր բառերը, որոնց մէջ է ձայնաւորը ի չի դառնում, որոնցից մի քանիսը հնուն հենց այդպէս էլ գրուել են. թերես բացառութիւն միայն կարող են կազմել օրէնսդիր, օրէնսգէտ, վրէժխնդիր, որոնք սովորական բարդութիւն չեն:

Այս բառերի մի մասի համար կարելի է ասել, որ լոկ գրութեան նմանութեամբ են ե-ով գրուել փոխանակ ե-ով գրուելու, ինչպէս գտնուում են շատ ձևագիրների մէջ՝ մեկ, գմբեթ, դեթ, ծակոտկեն (=ծակոտկեան), պատճեն (=պատճեան) ևն։ Ուրիշ բառերի համար իբրև արգելք մէջ կը բերեն անշուշտ դրանց ծագումը։ Այսպէս, օրինակ, յայանի է, որ ամեն (=ամենայն) բառը գրում են և ամէն ձևով։ Արդ ես կարդացել եմ մի քննութիւն, թէ այդ երկու գրութիւններից որը պէտք է ընտրել։ Յօդուածագիրը պնդում էր թէ այդ բառն ե-ով պիտի գրել, որովհետև այդ բառին համապատասխան է սանսկրիտ ինչ որ բառ, որի ինչ որ ձայնաւորին հայերէնում համապատասխան պէտք է լինի ե և ոչ ե։ Բայց այդ ամենը ինչքան էլ զիտուն և ճիշտ լինի, ճիշտ է միայն դասական գրաբարի համար, քանի որ այժմեան յօսուածքի մէջ ամեն դարձել է ամեն. և այս վերջին ձևն ընտրելով մենք զիւրացնում ենք ուղղագրութիւնը՝ մտայնելով արտասանութեանը և պակասելով է-ով գրուող բառերի թիւը, և այդ բառը մտայնելով այն բառերի շարքը, որոնց ե հնչիւնը բառակազմութեան ժամանակ չի փոխուում ի. դրանով ուղղագրութեան մէջ որոշ մեթոդ ու կանոն է մտնում։ Բայց ամեն գրութիւնը հակասում է բառի ծագմանը... Բայց արդեօք ամեն գրութեամբ շատ ենք մտածում դրա ծագման վրայ... Եւ արդեօք այն գիտնականը, որ կարողանում է մեր այդ ամեն բառը ծագած համարել ինչ որ հնդեւրոպական բառից, և զիտէ, որ այն ինչ հնդեւրոպական հնչիւնը դասական հայերէնում ե ձայնաւորն է տալիս, միթէ այդքան հետունքը գնացող չպիտի հասկանայ, որ կլասիկ հայերէնի ամեն ձևը նոր լեզուի մէջ դարձել է ամեն, որ այս նոր լեզուի օ հնչիւնը նայելով բառին՝ ծագում է ե. (մեծ), ե (ամէն—ամեն) ձայնաւորներից և ես երկբարբառից (գնացեալ—գնացել)։

Այսպէս ուրեմն ե-ով գրելով այն բառերի ու վերջին փակ վանկի է-երը, որոնք չեն դառնում ի, (բացի բայերից) մենք մեծ փոփոխութիւն չենք մտցնում մեր ուղղագրութեան մէջ, քանի որ դրանց թիւը նախ փոքր է, ապա դրանց մէջ կան այնպիսիները, որոնք գրում են նաև ե-ով։ Ապա չպիտի մոռանալ և այն, որ մեր աչքն արդէն բարդութիւնների մէջ վարժուած է այդ բառերի մի մասը ե-ով տեսնել. գրում ենք՝ աղուէս, բայց աղուես-ենի, աղուես-աքուն. գրում ենք՝ կղէգն, բայց կղեգն-իկ, կղեգն-ուտ։ Այս իմ առաջարկած փոփոխութիւնը փոքր է, բայց դրանով, կրկնում եմ, ե-ի ուղղագրութիւնը որոշ կանոնի տակ է մտնում, որով և մեր ուղղագրութիւնը մեծապէս դիւրանում է։ Եւ այս փոփոխութիւնը, ես կարծում եմ, կարելի է և պէտք է անել։

Անշուշտ աւելի մեծ դիւրութիւն և կանոնաւորութիւն կը մտնէր

ուղղագրութեան մէջ, եթէ է տառը պահուէր միայն բառերի սկզբում և էա (ոչ եա) կապակցութեան համար, իսկ մնացած դէպքերում գրէինք և. բայց դա մեծ փոփոխութիւն է և ապագայի խնդիր:

Յ տառի գրութիւնը

Այս տառի մասին խօսելուց առաջ՝ կարևոր եմ համարում այստեղ դնել երկբարբառների մասին. «երկբարբառ ասելով բառի ընդհարձակ մտքով հասկացում է երկու պարզ ձայնաւորի միացումն իբրև մի վանկ, որոնցից մէկն վանկային է (այսինքն կատարում է ձայնաւորի պաշտօն), միւսը վանկային չէ (այսինքն կատարում է բաղաձայնի պաշտօն): Այս ոչ վանկային ձայնաւորը կոչուում է կիսաձայն (այլ և բաղաձայնական ձայնաւոր): Կարելի է ուրեմն ասել թէ երկբարբառը կազմուում է մի ձայնաւորից և մի կիսաձայնից, օրինակ՝ աի, աի մի վանկային և ձայնաւորից + մի ոչ վանկային կիսաձայն i, և, կամ շուռ տուած ia, iա մի ոչ վանկային կիսաձայն i, և + մի վանկային ձայնաւոր և և նման:

Գործնականի մէջ սակայն երկբարբառ և կիսաձայն անուններ միակերպ այս նշանակութեամբ չեն գործածուում Այլ մանաւանդ թէ հնդիկների, յունաց ու լատինաց հին քերականութիւնների գործածութեամբ երկբարբառ ասելով հասկանում են յաճախ միայն այնպիսի միավանկ կապակցութիւնները, որոնց մէջ վանկ կազմող ձայնաւորն առաջ է ընկնում, հետևաբար աի, աի կապակցութիւնները, և ընդհակառակն միայն այն դէպքում են կիսաձայնի մասին խօսում, երբ ոչ վանկային ձայնաւորից առաջ է ընկնում, ուրեմն ia, iա կապակցութիւնների մէջ: Այս գործածութիւնը, ինչպէս տեսնուում է, իբրի էութիւնից չի ծագում, որակով ոչ վանկային կիսաձայնները նոյնպիսի ձայնաւոր են, ինչպէս և վանկային լի ձայնաւորները, միայն-վանկերի կազմութեան մէջ զբանք տարբեր պաշտօն ունին. բայց վանկերի կազմութեան մէջ յաջորդութիւնը, թէ արդեօք աի կրիւնի թէ ia, բնականօրէն նոյնպէս քիչ նշանակութիւն ունի. ինչպէս օրինակ ալ կամ la, ar կամ ra էլ կապակցութիւնների մէջ բաղաձայնների յետ ու առաջ դրելը: Պատահական է միայն, որ հին քերականները իրենց երկբարբառները (ուրեմն վանկային ձայնաւորի կապակցութիւնը ոչ վանկային ձայնաւորի հետ, ինչպէս աի աւ) համարել են իբրև կրկին ձայնաւոր հնչյունների (իբրև ձայնաւոր + ձայնաւոր), իսկ ընդհակառակն ia, ya նման յաջորդութիւնները դրել են իբրև բաղաձայն + ձայնաւոր խմբեր և ըստ այսմ առանձին նշաններ են յօրինել j և w (= i և y) «բաղաձայնների» համար: Նրանք որ գերազատում են երկբարբառ բառն ընդհարձակ մտքով գործածել, սովորաբար «կիսաձայն» բառը մի կողմ են թողնում, և վանկային ձայնաւորով սկսուող երկբարբ-

բառները, ինչպէս ai, au կոչում են ընկնող երկբարբառներ, իսկ այն երկբարբառները, որոնց մէջ բաղաձայնը առաջ է ընկնում, ինչպէս ia, ua, կոչում են բարձրացող երկբարբառ:

Տերմինների զործածութիւնը յաճախ բաւական կամայական նօրէն փոփոխում է զուտ քերականական կամ լեզուապատմական կլասիֆիկացիաներով: Համեմատական լեզուաբանութեան մէջ, կիսաձայն բառն, օրինակ, բաւական զործածական է, որովհետև սովորութիւն է i և u հնչիւնները ia և ua կապակցութիւնների մէջ համարել իբրև առանձին բաղաձայնական արժէքներ: E. Sievers, Grundzüge der Phonetik. IV. Aufl. S. 148. ff.

Արդ մեր լեզուի մէջ ես կայ մի կիսաձայն j, որ հին քերականների սովորութեամբ դուռում է իբրև բաղաձայն: Իբանով կազմուել են և կազմուում են մեր երկբարբառները, բայց երբ j-ն ձայնաւորից յետոյ է գալիս, մենք երկուսի կապակցութիւնը համարում ենք երկբարբառ՝ ինչպէս աj, այ, իսկ երբ ձայնաւորից առաջ է ընկնում j-ն, ինչպէս յա, յո կին, մենք երկուսի կապակցութիւնը սովորաբար համարում ենք բաղաձայն+ձայնաւոր կապակցութիւն: Բայց աj թէ յա կարտասանենք, j-ին ա-ից առաջ թէ յետոյ լինի, նոյն հնչիւնն է: Դա ոչ վանկային կամ բաղաձայնական ի ձայնաւոր է:

Արդ այս կիսաձայն j=յ հնչիւնը, ինչպէս միայն եղել է ընկզբում մեր j տառի հնչիւնը, փոփոխութեան է ենթարկուել, դա իրեն յատուկ հին հնչիւնը պահել է միայն բառերի մէջ ա և ս ձայնաւորներից յետոյ, բառերի վերջում ա և ս ձայնաւորներից յետոյ դուրս է ընկել, իսկ բառերի սկզբում կամ դուրս է ընկել, կամ դարձել է հաւասար հազագային հ հնչիւնին: Այսպէս մեր շատ բարբառների, ինչպէս և երկու գրական լեզուների մէջ բառասկզբի j և ի բնաւ չեն տարբերուում: Արդարև կան բարբառներ, որոնց մէջ բառասկզբի j-երը, թէպէտ դարձեալ վերածուել են հազագի, բայց միւս բարբառներից տարբեր. այսպէս ըստ Աժառեանի (Հայ բարբառագիտութիւն, եր. 10, 106-էջն.) Կարնոյ, Մշոյ, Այաչկերտի և այլ տեղերի հայերը ունին երկու տեսակ հազագային ձայն, մէկը հին ի հազագը, միւսը հին j=յ կիսաձայնից ծագած «երկար հազագը»: Իմ կարծիքով դեռ ես քննելի է թէ արդեօք այդ բարբառների մէջ «երկար հազագը» հին j-ից է ծագում, թէ հին j-ն բառասկզբում դուրս է ընկել և այդ բարբառների մէջ ձայնաւորներից առաջ աւելացել է մի հազագային հնչիւն, որ հին j-ի հետ կայ չունի. որովհետև այդ նախ չի երևում բոլոր հին j-երի տեղ և ապա շատ անգամ երևում է այնպիսի բառերի սկզբում, որոնք հին լեզուի մէջ j-ով չեն սկսուում:— Ինչ և իցէ, կան բարբառներ, որ ունեն երկու հազագ: Այս երկու հազագի տարբերութիւնը կա-

բելի է տեսնել ոչ միայն վերոյիշեալ բարբառների մէջ այլ և վա-
զարչապատուժ Այս արտասանութիւնը սակայն զուտ բարբառային
է և ով որ մանկութիւնից իր հայրենի բարբառից չի վարժուել
գրան, նոյն իսկ դժուարութեամբ կարող է յսել, ըմբռնել և իւրա-
ջնել: Գրական լեզուների մէջ բառերի սկզբում ունինք միայն մի
հազարչային հնչիւն, որ ծագում է մասամբ հին և հնչիւնից, մասամբ
հին և կիսաձայնից, հենց այդ պատճառով հ-ի և յ-ի սխալն անուժ
են նոյն իսկ այն մարդիկ, որոնց բարբառի մէջ յ-ին դարձել է
գերկար հազարչ:

Ուստի գրական արտասանութեան տեսակէտից ոչ մի արգելք
չկայ բառասկզբի յ-երը վերածելու և տառի:

Սրանով մօտաւորապէս հարիւր արմատի ուղղագրութիւն կը
փոխուէր, բայց մեր ուղղագրութիւնը չատ կը դիւրանար, քանի
որ ոչ մի կանոն չկայ բառասկզբի և և յ տառերի գրութեան հա-
մար, բայց եթէ այն, որ ասանձնապէս պէտք է սովորել այդ տա-
ռերով սկսուող բառերը:

Այս փոփոխութիւնը սակայն ևս համարում մի երկրորդ աս-
տիճանի փոփոխութիւն, որ կարելի չէ այժմ անել. դրանով, քանի
որ բառամիջի օ-երն ևս ու պիտի գրել, մի քանի բառերի պատ-
կերները չատ կը փոխուէին, ինչպէս՝ հոգ, հոժար, հոնք, հոշտել,
հորանջել, հորինել, իսկ յետոյ բառը, վերջին յ տառի դուրս ընկ-
նելով, կըստանար հետո կերպարանքը:

Միւս փոփոխութիւնը սակայն հնարաւոր է. վերջի անձայն յ-երն
ա և ո ձայնաւորներից կարելի է դուրս ձգել և գրել ծառա, գաւ-
մտնա: Արդարև դրանով մի քանի բայերի պատկերը, որոնք միջին
օ-ունին, ներկայ կրորդ դէմքի մէջ բաւական կը փոխուի՝ զորա-
նա, աղոսանա, ծանոթանա, բայց այլապէս կարելի չէ. կամ պէտք
է մենք հաշտուենք այդ դժուարութեան հետ, կամ թէ բառավերջի
անձայն յ-երի դուրս ձգելը թողնենք իբրև մի երկրորդ աստիճան
փոփոխութեան, երբ վարժուած կը լինենք բառերի մէջ ո-երի զը-
բութեանը փոխանակ օ-երի ևս սակայն կը նախընտրէի առաջինը,
որովհետև բառերի վերջի անձայն յ-ի գրել չգրելը, կապուած ի-
նելով քերականութեան հետ, բաւական դժուարութիւն է պատ-
ճառում. դրա համար պէտք է լինում իմանալ յատուկ անուն, դե-
բանուն, հրամայական եղանակ, մակբայ ելլ. այսինքն բառերի տե-
սակները, որպէսզի իմացուի թէ որ բառերի վերջից ա-ից յետոյ
յ-չի գրոււմ. միւս կողմից և վերջացած յատուկ անուններն ևս հին
գրութեամբ՝ Յարոյ, կարոյ ելլ ունին յ մինչդեռ ա վերջացածները
չունին. մի քանի մակբայների վերջում ա և օ տառերից յետոյ յ չի
գրոււմ, իսկ ուրիշների վերջում գրոււմ է: Այս կանոնները չատ բարդ
ու դժուար են դրանցով առաջնորդուելու համար Ապա դարձեալ մի
ուրիշ կանոն էլ պիտի սովորել, այն որ ծառայ և նման բառերի վերջի

յ-ն, երբ վրան յօգ է աւելանում ե կամ յոգնակի՛ն է կազմուում, դուրս է ընկնում ծառաս, ծառադ, ծառան, ծառաներ, և եթէ վերջին ձեւերի մէջ յ չենք գրում, ես ոչ մի առանձին արգելք չեմ գտնում նաև ծառա գրելու, ինչպէս գրում ենք՝ նա, Սառա: Այսպէս վարուելով մենք ազատուած կը լինէինք մի շարք կանոններից, որոնք կապուած են քերականութեան հետ:

Կը լինին գուցէ առարկոյններ, որ եթէ ծառա գրենք, այն ժամանակ ինչպէս պիտի բացատրել՝ ծառայի, ծառայով, ծառայութիւն ելլն: Շատ հեշտ. այժմ ի՞նչ գրում ենք Սառա, Սառայի, Սառայով ելլն Աննա, Աննայի, և ինչպէս ենք բացատրում այդ եթէ այժմ ծառայ և նմանրտների վերջին անձայն յ-ն բացատրում ենք, թէ սկզբնապէս արտասանուել է, իսկ այժմ չի արտասանուում, բայց երբ ետեից մի ձայնաւոր է գալիս, այդ յ-ն վերականգնում է իր կիսաձայն հնչու՛նը փոփոխուած ուղղագրութեամբ էլ կը բացատրել թէ երբ ծառա և նման բառերից նոր բառեր են կազմուում կամ գրանք հոլովուում են, ա ձայնաւորից յետոյ մտնում է յ, որովհետև սկզբնապէս այդ բառերը եղել են ծառայ, բայց վերջի յ-ն այժս գուրս է ընկել: Այս բացատրութիւնը հարկաւոր է անշուշտ քերականութեան համար, թէ չէ սովորական ուղղագրական ուսման համար կարիք չկայ դրան: Այստեղ միայն մի ընդհանուր կանոն պիտի իմանալ. թէ ա և ո ձայնաւորների և սրանց յաջորդող ձայնաւորների մէջ գրուում է յ, որ միշտ էլ արտահանուում է իր հնչիւնով. ինչպէս և այժմ վարուում ենք յատուկ անունների մէջ՝ Աննա, Աննայի, և օտարազգի բառերի մէջ՝ արխտուկրասիա, արխտուկրասիայի:

Մի առարկութիւն էլ գուցէ լինի. յ տառի դուրս ընկնելով պարզապէս աւ վերջացած բայերի հրամայական և ստորադասականը այն ձևն են ստանում, որ կարող է, կասեն, շփոթութիւն պատճառել: Չեմ կարծում թէ այդ շփոթութիւնն այնքան երկիւղալի լինի. իսօքեր մէջ հրամայականը երկրորդ դէմք է, կապուած կամ երկրորդ դէմքի դերանունան հետ կամ մի կոչական անունան հետ. մինչդեռ ստորադասականը երրորդ դէմքով է և ենթակայ ունի մի երրորդ դէմքի դերանուն: Եւայց այդ հրամայական իր ընաւորութեամբ յաճախ վրան շեշտ ունի՝ գնա (դու) գնա (նա): Շանթի «Հին աստուածներն» մէջ միշտ դուրս է ձգած վերջին անձայն յ-երը, և ես գոնէ այդպիսի շփոթութեան չեմ պատահել կարգալիս:

Այսպէս ուրեմն ես կառաջարկէի անձայն յ-երը դուրս ձգել և մեր ուղղագրութիւնը մի աւելորդ բնօրէն թեթեւացնել:

Անցնենք այժմ համբաւաւոր ւ-ի, վ-ի և ու-ի գրութեանը:

Ի, Վ, ՈՒ

Այս ուղղագրական խնդրի մասին քսան տարուց աւելի է, որ այնքան ուղիղ և սխալ բովանդակութեամբ յօդուածներ են գրել և կարծիքներ են յայտնել, որ ես, ձանձրալի չլինելու համար կաշխատեմ կարճ կապել:

Հին հայերէնը երկու մի և նոյն կարգի տեական հնչիւն է ունեցել Վ և ւ, որոնց հին արտասանութիւնը սակայն դեռ բոլորովին պարզուած չէ: Ըստ Մէյէի՝ Հայոց լեզուի այբբենարանը կազմելու ժամանակ զբանք երկու տարրեր հնչիւնների նշան են եղել, որովհետեւ երկու տառ են յօրինած, քանի որ հայերէնի այբբենարանը չունի տառերի կրկին գործածութիւնը. հաւանական է որ ւ-ը դեռ ունեցած է եղել գրեթէ մի և նոյն արժէքը, ինչ որ բաղաձայնական ու-ն, որովհետեւ դա է գործածուած երկբարբառների մէջ, ինչպէս աւ երկբարբառի մէջ, որ դառնում է վերջը օ, և եւ երկբարբառի մէջ, որ վերջը բարբառային ձևով օ է արտասանուում... Ընդհակառակն միւս տառը Վ. որ միայն գործ է անում բառերի սկզբում, պէտք է արգէն մի բոլորովին ազատ բաղաձայնական բնութարութիւն ունեցած լինի, աւելի շփական: Յամենայն զէպս Վ և ւ տառերի տարբերութիւնը շատ մեծ չպիտի եղած լինի, քանի որ Վ-ի գրութիւնը միւս բոլոր ձայնաւորներից յետոյ և ւ-ի գրութիւնը միւսը բոլոր ձայնաւորներից յետոյ բառերի մէջը և վերջը բացատրում է գրութեան (graphique) անհրաժեշտութեամբ. ու-ն լինելով ու ձայնաւորի համար, ու ձևով արտայայտութիւնը օւ (w բաղաձայնով) իմբի համար երկգրիմի կը լինէր. վ-ի գործածութեամբ ով-ի մէջ հնարաւոր է եղել այդ երկգրութիւնից խուսափել, բայց դա ցոյց է տալիս և այն, որ ւ և Վ մէկ մէկու շատ մօտ հնչիւններ են եղել: Այսպէս ուրեմն ւ տառն ամենայն հաւանականութեամբ եղել է բաղաձայնական ու և իբրև այդպիսին իր որակով դա եղել է ձայնաւոր, բայց շատ մօտիկ է վ բաղաձայնին:

Ինչպէս էլ եղած լինին հին ւ և Վ տառերի արտասանութիւնը, արդի հայերէնում այս երկու տառերը մի և նոյն չրթնային առամենային շփական հնչիւնն են: Այս այնպիսի պարզ մի հնչիւն է, որ միայն հնչաբանութեան անտեղեակ մարդիկ կարող են սասել թէ սենք իբր երկու Վ հնչիւն ունինք, մէկը կոշտ Վ, միւսը փափուկ ւ. և իբր թէ վաղել և աւաղ, և ծով ու հաւ բառերի մէջ միևնոյն Վ հնչիւնը չէ: Այդպիսի սխալ հասկացողութիւն ասպարեցելու համար՝ իբրև օրինակ բերում են կամ այնպիսի բառեր՝ հարաւ, նաւթ, որոնց մէջ Վ հնչիւնը դարձած է համապատասխան կարգի անձայն Ծ հնչիւն, կամ ոչ նման կապակցութիւնների մէջ են դէմ ու դէմ դնում Վ և ւ տառերի կարծեցեալ տարբերութիւնը, մոռանալով որ

ամեն հնչիւն էլ, նայելով թէ իրենից առաջ կամ յետոյ ինչ հնչիւն-
ներ են, բառ այնմ էլ տարբեր է արտասանուած, բայց զբանով հնչիւնի
տեսակը չի փոխուած:

Այսպէս ուրեմն եթէ հին լեզուի մէջ ւ եղել է բաղաձայնական
ու ձայնաւոր, մօտիկ վ բաղաձայնին, նոր լեզուի մէջ դա արդէն կա-
տարելապէս դարձել է վ բաղաձայն, և այսպէս մեր երկու զրական
լեզուի մէջ ևս:

Ինչպէս բաղաձայնական ւ ձայնաւորը դարձել վ, նոյն ձևով
յաջորդ ձայնաւորից առաջ նաև հին ու ձայնաւորը դարձել է վ,
միայն այս ձայնափոխութիւնը աստիճանաբար է կատարուել. այ-
սինքն հին ու ձայնաւորը անմիջապէս բաղաձայն վ չի դարձել, այլ
նախ դարձել է բաղաձայնական ու (ո) ձայնաւոր, ապա նոր վ բա-
ղաձայն: Ուրիշ խօսքով, եթէ մեր այբբենարանի ւ տառի սկզբնա-
կան արժէքով գրենք, հին զուարթ, ցուեր, Ասուած բառերը նախ՝
դարձել են զուարթ, ցուեր, Ասուած, որոնց մէջ ւա=ուա կազմուած է
բարձրացող երկրորրաւ. ապա՝ այս երկրորրաւի սկզբի բաղաձայն
ւ=ու ձայնաւորը դարձել վ բաղաձայն, ինչպէս երկրորրաւային
դարձած ուն, որ է ուս (սո), բառերի սկզբում դարձել է վա: Ա-
րեւելեան գրական լեզուի մէջ այս ձայնաչրջութիւնը չատ պարզ է,
և մենք այսօր արտասանում ենք պատվէր, նվէր, Աստված և ոչ
պատուէր Աստուած, կամ՝ պատուէր, Ասուած: Գուցէ կըլինին
բարբառներ, որոնց մէջ այս հին ու ձայնաւորը վերածուած է բա-
ղաձայնական ու ձայնաւորի, բայց մեր գրական լեզուի մէջ դա
արդէն վ բաղաձայն է:

Կընշանակէ մեր գրական լեզուի մէջ այժմ ունինք մի վ բա-
ղաձայն, որ մասամբ ծագել է հին վ բաղաձայնից, մասամբ՝ հին
ւ բաղաձայնական ձայնաւորից, մասամբ ևս հին ու ձայնաւորից:
Եւ որովհետև մեր այժմեան ուղղագրութեան մէջ պահուած ենք այդ
երեք հին տարբեր հնչիւնների գրութիւնները, զրանից առաջանում
է և մեր վ չփականի գրութեան դժուարութիւնը: Իմ կարծիքով
հանգուցեալ Աղայեանը մեր ուղղագրութիւնը զիւրայինը յանկա-
նայով չպիտի ձեռնարկէր այս հին ձայնաւոր ուն բաղաձայնական
ւ ձայնաւորին վերածելով. ամենից առաջ այն պատճառով, որ մեր
ուղղագրութիւնը այդ մասում որոշ կանոն ունի. այն է՝ բառերի
սկզբում և ունից յետոյ գրուած է վ, միւս ձայնաւորներից յետոյ գրը-
ւում է ւ, իսկ բաղաձայններից յետոյ և ձայնաւորներից առաջ ու:
Ես անձնական փորձից գիտեմ, որ Աղայեանի այս ձեռնարկութիւ-
նից առաջ աչակերտները հեշտութեամբ վարժուած էին ուն ձայնա-
ւորից առաջ վ արտասանելու, որ և ընական է մեզ համար. ապա
և նրանք որոշ կանոնով առաջնորդուելով բաւական արագ իւրա-
ջնում էին վանհնչիւն ունի ուղղագրութիւնը, մասնաւանդ որ լեզ-

ուի, լեզուանի, ձուի և այլ նման գրութիւնների ժամանակ մտածում ենք լեզու, ձու ձևերի մասին: Ապա Աղայեանի այդ ձևանարկը ուղղագրութեան ճշտութեան տեսակէտից ևս պալ է. եթէ պէտք էր վ-ահնչիւն ու-ն վերածել նորն հնչիւնն արտայայտող մի տառի, այդ չպէտք է լինէր հին բաղաձայնական և ձայնաւորը, այլ միայն վ բաղաձայնը. որովհետև հին ու ձայնաւորը ոչ թէ ւ է դարձել, այլ վ, ինչպէս և հենց ինքը ւ-ն էլ չի պահել իր բաղաձայնական ու ձայնաւոր հնչիւնը, այլ դարձել է վ բաղաձայն, իսկ իւ երկբարբառի մէջ ու ձայնաւոր:

Այս սխալն Աղայեանը մինչև վերջն էլ չըմբռնեց: Ապա հանգուցեալ գրողէտին աւարկում էին նաև դիտական ուղղագրութեան համար պահանջուած պայմանի տէսակէտով, թէ ամեն հնչիւն պէտք է մի տառով նշանակուի, և թէ ամեն տառ միայն մի հնչիւն պէտք է ունենայ. Աղայեանը եթէ աւանդական ուղղագրութեան մէջ փոփոխութիւն է մտցնում, այդ փոփոխութիւնը կիսաձամբի չպիտի թողնի, այլ կատարեալ պիտի անի և ոչ միայն վ դարձած ու-երը, այլ և վ դարձած ւ-երը պէտք է մի տառով նշանակի. ՚ն այդ մի տառը պէտք է լինի միայն վ և ոչ ւ: Այս ոչ միայն քարոզեց իմ բարեկամ Ստ. Մալխասեանը, այլ և գծաբխտաբար սկսեց կիրառել, թէպէտ դարձեալ թերի, որովհետև ոս, ոք, ոչ և նմանները չի գրուած վոս, վու, վոչ:

Սկզբում ուրիշներն ևս հետևեցին նրան, բայց այժմ, որքան գիտեմ, նա մենակ է մնացել գործնականի մէջ. որովհետև ուղղագրութիւնը փոխելու համար բաւական չէ միայն գիտական ճշտութիւնը, այլ հարկաւոր է նաև մի ուրիշ պայման. այն որ, ընդունելի լինելու համար, պէտք է շատ բառերի պատկեր չբոխտուի և բառերի պատկերը շատ չփոխուի: Արդ, հայերէնում վ շփականը միայն վ բաղաձայնով գրելիս՝ մի անգամից այնքան շատ բառերի պատկերներն են փոխուում, և բառերի պատկերներն այնքան շատ են փոխուում, թէկուզ վ տառի միշտ աչքի ընկնող մեծութեամբ, որ ևս չեմ կարծում, թէ մեր գրագէտները հեշտ հաշտուեն դրա հետ: որովհետև գործնականի մէջ անյաջողութեան չհանդիպելու համար՝ այսպէս թէ այնպէս նկատի պէտք է ունենալ գրագէտների դիւրութիւնը, որոնք բառերը ոչ այնքան տառերով են կարդում, որքան ընդհանուր պատկերով: Եւ ինչպէս վերևում բացատրեցի, Աղայեանի ձևանարկի յաջողութեան գլխաւոր պատճառը հենց այն է, որ նա համեմատաբար աւելի քիչ բառերի մէջ փոփոխութիւն էր մտցնում, և որ բառերի մէջ ու-ն դուրս ձգելիս նոր տառ չէր աւելացնում: Հենց այդ պատճառով, ևս աւելի կուզէի, որ պ. Մալխասեանը, յաջողութիւն ունենալու համար միայն վ-ահնչիւն ու-երը վ-ի վերածէր, ապագային թողնելով, որ վ-ահնչիւն ւ-երն ևս վ-ի

փոխուին. որովհետև իմ կարծիքով եթէ երբևիցէ մեր այդ մի հնչիւնի համար մի տառ պիտի լինի, դա միայն մտառը պիտի լինի:

Այս այսպէս լինելով իմ դասախօսութեան ծրագրի մէջ կարգալով հնարաւոր մասնակի փոփոխութիւնների մէջ պահանջուեալ տեղ գրել ւ), կր հարցնէք անշուշտ թէ հապա ինչու ես այս եմ առաջարկում և ոչ թէ վեր: Դրա պատասխանն արդէն սկզբում տուած եմ: Ինչքան էլ Աղայեանը սխալ ձևով սկսեց գործը, բայց չի կարելի ուրանալ, որ դրանով համեմատաբար թեթևանում է ուղղագրութիւնը, այն է՝ միայնակներ՝ երեք ձևով արտայայտուելու փոխանակ ունենում է երկու տառ միայն, և ապա ու երկտառը մնում է միայն ու ձայնաւորի համար: Ապա զուարթ նուէր ձևերն առաջ էլ արդէն գրում էին զուարթ, նրւէր, այսինքն և տառով միայն, ինչպէս աւելում է էյն. Աղայեանը այստեղ նորութիւն չի բերել. այլ միայն ոտանաւորի և տողադարձի գրութիւն ընդհանրացրել է, ինչպէս և ը չգրելը բառի մէջ, դրանով մի ընդհանուր կանոն է մտնում, թէ ձայնաւորներից յետոյ (բայցի ու ից) ւ է գրուում: Եւ վերջապէս ինչպէս և կարծում եմ, իրողութիւնն այն է, որ այդ ուղղագրութիւնն հենց հեշտութեան պատճառով եթէ այսօր մեզնում իշխող չէ, շուտով իշխող կը դառնայ, եթէ միայն իհարկէ դրա առաջն առանձին արդեւքներ չհանուին: Այդպէս է վարժուում գրեթէ լոյր նոր սերունդը մեզնում. այսպէս են գրում արդէն երիտասարդ սերնդի մեծ մասը: Ես ուրեմն միայն առաջարկում եմ հատուել կատարուած իրողութեան հետ և այս միայն այն դէպքում, երբ չենք կարող յաւագոյնի մասին հոգալ: Լեզուների մէջ շատ անգամ մի սխալ բան է մտնում, բայց սխալն ընդհանրանալուց յետոյ աւիպուած են հաշտուել եղածի հետ: Ասկայն մի հանգամանք եւս Արեւիկեան գրական լեզուի մէջ, ինձ համար պարզ է, որ հին ու ձայնաւորը յաջորդ ձայնաւորից առաջ բաղաձայնական ու ձայնաւորից անցնելով դարձած է այժմ վ. բայց թէ արդեօք արեւմտեան գրական լեզուի մէջ ես ամեն դէպքում այդպէս է արտասանուում, այդ ես չգիտեմ: Ինձ թւում է թէ այնտեղ դեռ տատանում կայ. այսինքն դեռ այս ու ձայնաւորի համար դեռ բոլորովին չի հաստատուած վ բաղաձայնը, այլ մի երկու դէպքում ու կամ բաղաձայնական ու (ւ) է արտասանուում: Գծախտաբար ևս յարմարութիւն չունիմ այդ դիտելու անձամբ: Աճառեանը (Հայ բարբառներ 16) խօսելով գրաբարի և գրական լեզուի երկրարբանների մասին, գրաբարի ուս երկրարբառը թէ բարբառների և թէ գրական լեզուի մէջ վա վանկին վերածուած է դնում: Կրաւորականները, գիտեմ, վով են կազմուում. տողադարձից՝ զուարթ, նրւէր՝ երեւում է, որ զվարթ, նվէր են արտասանում. բայց թէ ինչպէս են արտասանում ու ձայնաւորով վերջացած անունների հոլովները՝ վերարկու-ի, լեզու-ի, հետու-էն,

Թէ վերարկւի, լեզւի, այսինքն բազաձայնական ու ձայնաւորով, թէ վերարկվի, լեզվի, հեռվէն վերջինս ինձ կասկածելի է թւում, մանաւանդ որ Կ. Պոլսի բարբառով մի նմուշի մէջ (եր. 255) գտնում ենք լեզուլիթ, հեռույեկն Ապա արևմտեան գրողներն առարկելով վ-ի դէմ պնտում են թէ իրենք վ չեն արտասանում, այլ մի տարբեր հնչիւնով ինձ թւում է, որ այդ տարբեր հնչիւնը հենց բազաձայնական ու (=ւ) ձայնաւորն է, որ նրանք որոշել չեն կարողանում: Յամենայն դէպս, մինչև ճշտութեամբ չպարզուի այս խնդիրը, կարելի չէ այդ ձևերը ոչ լեզուի, հետուէն գրել և ոչ լեզվի, հեռվէն: Որովհետև չպիտի մոռանալ, որ միայն այնտեղ հնարաւոր է ուղղագրութեան մէջ փոփոխութիւն մտցնել, ուր երկու գրական լեզուներն ևս ունին մի ընդհանուր արտասանութիւն: Իսկ եթէ մէկն արտասանում է լեզու, լեզուի, կամ լեզւի միւսը՝ լեզու, լեզուի, կարելի չէ վերջինիս արտասանութեան հիման վրայ միայն գրել լեզվի կամ լեզւի. այդպիսի դէպքում պիտի պահել հին ուղղագրութիւնը: Այս մասին պիտի խօսեն արևմտեան գրական լեզուի մարդիկ: Աճառեանի հայ բարբառագիտութիւնն այս մասում դժբախտաբար թերի է:

Ես վերջապի իմ կարծիքով հնարաւոր փոփոխութիւնների շարքը: Իրանցից վերջինով ես ոչ մի նոր առաջարկ չեմ անում, բայց եթէ այն որ պէտք է հաշուել թէպէտ սխալ, բայց կատարուած և կատարուող իրողութեան հետ մի պայմանով միայն, եթէ մենք չենք կարող այդ սխալի առաջն առնել կամ հին ուղղագրութիւնը վերականգնելով կամ վ-անհչիւն ու-ի տեղ վ գրելով: Բայց ես կարծում եմ, որ եթէ կամենանք, կարող ենք այդ անել և մեր ուղղագրութիւնը թևթևացնելով հանդերձ՝ աւելի ճիշտ հիմունքների վրայ դնել: Ապա բառերի վերջի անձայն յ չգրելը որ արդէն գործածում են ոմանք, ինչպէս և բառերի մէջ օ-երի տեղ ո գրելը մի առանձին խոշոր փոփոխութիւն չի առաջ բերում մեր բառերի ընդհանուր պատկերի մէջ, բայց շատ դիւրացնում է մեր ուղղագրութիւնը: Շատ աւելի պակաս զգալի կը լինի Ե ի տեղ Ե գրելը բառերի մէջ վերջին փակ վանկերում, երբ Ե-ն բառակազմութեան ժամանակ ի փոխում. այսպիսի բառերի թիւն աւելի ևս սահմանափակ է, իսկ մի քանիսի ուղղագրութիւնն էլ սատանուող վիճակի մէջ է. կան և Ե-ով և Ե-ով գրողներ: Այս փոփոխութիւններով մեր ուղղագրութիւնը ձայնաւորների և վ-ի նկատմամբ հարկաւ գիտական ճշտութիւն չի ստանում, բայց ուղղագրութեան մէջ որոշ դիւրութիւն է մտնում և մի քանի տառերի գրութիւնը կանոնաւորում է:

Ի՞նչպէս պէտք է անել, որ դա դիւրի գայ, եթէ ցանկանում ենք այդ Բայց կան անուշտ շատերը, որոնք երբեք այդ ցանկալի չեն համարում և ասում են, թէ պէտք չէ ամենևին որ և է փոփոխութիւն: Այդպիսիներին սակայն ես պիտի կրկնեմ, թէ փոփոխութիւնը լինում է և լինելու է. կուզէք գիտութեամբ համարէք, կու-

դէք տգիտութեամբ: Հետզհետէ մանոււմ են նորանոր փոփոխու-
թիւններ և մենք անկարող ենք դրա առաջն աննել յանուն միակերպ
պողոպարութեան: Շատ անգամ ասում են թէ Հոգեւոր իշխանու-
թիւնը կարող է և պէտք է արգելէ դպրոցներում գործածել նորա-
տեսակ ուղղագրութեամբ դասաղբքեր: Այդ հնարաւոր է, բայց
դրանով առաջը չի առնուիլ փոփոխութեան, որովհետեւ ոչ ոք չի
կարող արգելել այս կամ այն անհատին, այս կամ այն լրագրին որ
այս կամ այն ուղղագրութիւնը բանեցնի: Միւս կողմից մեր աչքի
առաջ այն երիտասարդները, որոնք դպրոցում սովորել են և տարի-
ներ շարունակ դորձադրել են հին ուղղագրութիւնը, մէկ օր թող-
նում են այդ: Դպրոցում արգելելը դեռ առաջը չի առնիլ այդ բանի:
Եւ վերջապէս Հոգեւոր իշխանութիւնը որ ուղղագրութիւնը պիտի
ընդունէ տատանուող ձևերից, որոնց թիւը փոքր չէ. արդեօք նա
կուսկտեմնա է այդ մասին: Մի Ֆրանսիացի գիտնական, խօսելով
ուղղագրութեան մէջ մայրենի փոփոխութիւնների մասին, կարող է
վերջն ասել, «Ակադեմիան միայն բաւարար իշխանութիւն և հեղի-
նակութիւն ունի այս վերանորոգութիւնը կատարելու», և Ակադե-
միան թէպէտ դանդաղ, բայց հետզհետէ կատարում է: Բայց ուր է
մեր մէջ այդ հեղինակութիւնն ու իշխանութիւնը: Կարող է մեր հո-
գեւոր իշխանութիւնն այդ Ակադեմիայի հեղինակութիւնն ունենալ:
Ես կարծում եմ, ով որ ամեն յոյս դնում է հոգեւոր իշխանութեան
վրայ և հաւատում է, թէ նա կարող է նորամուտ փոփոխութիւն-
ների առաջն աննել, այդպիսին միայն այն է անում, որ բոլորովին
ազատ է թողնում մեր ուղղագրութիւնը, և ասում է որ ամեն ան-
հատ մեզնում կարող է մի ակադեմիա լինել և ուզած փոփոխու-
թիւնը ոչ միայն առաջարկել, այլ և անմիջապէս գործադրել:

Իմ համեստ կարծիքով, հոգեւոր իշխանութիւնը կարող է միայն
գործադրել տալ որ և է ուղղագրութիւն իր դպրոցներում, իսկ որպէս
զի դպրոցներից դուրս ևս դպրոցի աշակերտները շարունակին գոր-
ծադրել իրենց սովորած ուղղագրութիւնը, որպէս զի՛ լսլոր գրա-
դէաներն ու լրագիրներն էլ միակերպ ուղղագրութիւն բանեցնեն,
հարկաւոր է մի հեղինակաւոր խորհուրդ մասնագէտներից կազ-
մուած, որ լրջութեամբ պարապէր այդ խնդրով, բազմակողմանի
կերպով ուսումնասիրէր մեր ուղղագրութիւնը և մի որոշ լուծում
տար ընդունելի կամ մերժելի փոփոխութիւնների համար: Այդ մաս-
նագէտ մարդկանց խորհրդից ընդունուածն ընդունելի կը լինէր և
հոգեւոր իշխանութիւնից և գրագէտների ու լրագիրների համար:

Մասնագէտ մարդիկ կը գտնուին անշուշտ մեզանում, հարկա-
ւոր դէպքում պիտի օգտուիլ և եւրոպական յայտնի հայագէտներից,
որոնք չեն կարծում զլանան այդ մասին իրենց խորհուրդները տալու:
Բայց ով պիտի ձևոնարկէ այդ մասնագէտների խորհուրդը
գլուխ բերելու, որպէս զի թէ դպրոցներում և թէ գրագէտներից
ընդունելի լինի նրանց խորհրդի որոշումը: Այս հարցի համար ես

կրկու կողմից ձեռնարկէցութիւն կարեւոր եւ համարուած Քանի որ գարտնցները գտնուում են Հոգևոր Իշխանութեան հրամանի տակ, մի կողմից նա գլուխ պիտի կանգնի այդ գործին թէ այստեղ և թէ Թուրքիայում և Բայց հոգևոր Իշխանութիւնը մենակ բաւական չէ, այդ գործին գլուխ պիտի անցնի նաև Հայ գրագէտների բնկերութիւնը Թիֆլիսում, և հայ գրագէտները Կ. Պոլսում, որպէս զի խորհրդի որոշումն ընդունելի լինի և գրագէտների կողմից Դժբախտաբար ևս հասեւ եւ թիֆլիսի գրագէտների միութիւնից, բայց կարծում եմ, որ ինչպէս և ինչ նպատակով էլ լինի այդ Բնկերութեան կանոնադրութիւնը, նա պարտաւոր է և կարող է հոգալ մեր ուղղագրութեան միակերպութեան մասին, քանի որ ուղղագրութիւնը ոչ միայն գարտնցներին է հարկաւոր, այլ և նոյնչափ և աւելի իրենց գրագէտներին է վերաբերուած Հաւատում եմ, որ եթէ մի կողմից հոգևոր Իշխանութիւնն ու միւս կողմից գրագէտների միութիւնը Թիֆլիսում և Կ. Պոլսում կամենան, կարող է այժմ գլուխ գալ մի հնչյունակաւոր խորհուրդ, որ իր որոշումներով մի քանի ուղղագրական խնդիրների գոնէ լուծում տար: Անշուշտ մի անգամից չեն սպասուիլ բոլոր կարեւոր ուղղագրական խնդիրները, քանի որ փոփոխութիւնները, եթէ պիտի լինին, աստիճանաբար հետզհետէ պիտի լինին, բայց ինչպիսի էլ լինին գիտական պատրաստութեամբ մասնագէտների խորհրդի որոշումները, ընդունելի դառնալով մեր գարտնցների և գրագէտների համար՝ որոշ չափով վերջ կը դնեն մեր այս խառն ուղղագրական վիճակին: Եւ ուղում ենք հաւատալ, որ այդ խորհուրդը ոչ միայն գիտական հոգի վրայ կը կանգնի, այլ և աչքաթող չի անիլ մեր ուղղագրութեան համար անհրաժեշտ գործնական դիւրութիւնը:

Իսկ մինչ այդ, ես միայն մի բան կարող եմ ասել, որ մեզ նից ամեն մէկն էլ, ինչքան կուզէ թող խորհի ու գրի մեր ուղղագրութեան մասին, բայց երբեք իրեն չհամարի մի Ակադեմիայի հաւասար և ինչ որ ինքը մտածում է ու ձիշտ է համարում, երբեք իրաւունք չունի և անմիջապէս գործադրելու:

Աւելի լաւ է ուղղագրութիւնը լինի սխալ ու դժուար, բայց մրակերպ: Ես կը վերջապահեմ իմ խօսքս ինչով որ սկսեցի. փոփոխութիւն, իմ կարծիքով պէտք է և կարելի է անել որոշ չափով. բայց եթէ որ և է փոփոխութիւն պիտի վերացնի մեր ուղղագրութեան միութիւնը և մեր երկու գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է որ չլինի: Իսկ մեր ամեն, իրենց մի մի Ակադեմիա կարծող անհատների փոփոխութիւններին ուրիշ բան չի վիճակուած, բայց եթէ մի նոր խառնափնթոր դրութիւն մտցնել մեր ուղղագրութեան մէջ: Միայն հոգևոր Իշխանութիւնների և գրագէտների միութեան ձեռնարկէցութեամբ կազմուած քանիքուն մարմնի որոշումը մեզ համար ընդունելի և պարտադիր կը լինի: Իսկ մինչ այդ, ձեռք պիտի քաշել ամեն հին ու նոր փոփոխութիւններից և դատաւար աւանդական ուղղագրութեանը: Այս է ուղիղ ճանապարհը: